




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ՀԱՆ
ԱՌԺՈՂԿՈՄԱՏ



ԲԺ. ՄԱԼԽԱԶՅԱՆ Ա.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԶՐՈՒՅՑՆԵՐ

ԱՌԺՈՂԿՈՄԱՏ * 1932 * ՅԵՐԵՎԱՆ

20 JUL 2010

№ 17 ՍԱՆՎՈՒՍ ԳՐԱԳԱՐԱՆ № 17

ԲՃ. ՄԱԼԽԱՋՅԱՆ Ս.

61

5-16

us

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

5102

14198.57

ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



1931

21 JUN 2013

526

Պետհրատի տպարան
Գլավիէտ № 6933 (բ)
Պատվեր № 5251
Տիրաժ 3000

ՍՍՆԻՏԱՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ*)

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, վորի շնորհիվ իշխանության գլուխ անցավ բանվորա-դյուղացիա-կան կառավարությունը, վերջնականապէս սրբեց յերկրի վրայից անցյալը և նրա խարխուլ մնացորդների վրա կառուցեց հզոր նորը: Սա վերաբերում է մեր կյանքի բոլոր ճյուղերին: Բժշկական գործը նույնպէս չէր կարող չլինել իշխանության և մենք տեսնում ենք, վոր խորհրդային բժշկությունը կազմակերպւում է բոլորովին նոր, մինչև հիմա չտեսնւած սկզբունքներով:

Անցյալում բժշկությունը և վորակալ բժշկական ողնությունը սեփականություն էր վորոշ գաղափարով՝ բուրժուազիայի:

Բուրժուազիայի սպառարկման էլին ծառայում բոլոր բուժ-հիմնարկները, բուժաբաններն ու հիվանդանոցները:

Բուժ-ողնությունից աշխատավորությունն ողտւում էր այն չափով, ինչ չափով հարկավոր էր Ֆիզիքական դոկտրինանը տաշտական, իսկ նրա Ֆիզիքական առողջությունը հարկավոր էր բուրժուազիայի չահադործման համար:

*) Սույն նյութը գաղափարւած է Հայաստանի Կենտրոնական մին կից բացւած ակտիվիստների դասընթացներում:

Այլևի՛ր վատթար դրութեան մեջ եր գտնուեալ դու-
ղացիութեան բուժողութեանը: Յերբ իշխանութեանը
պրոլետարիատի ձեռքն անցաւ և հիմնովեց խորհրդային
կրօնապարզ, հիմնովին վտիպեց նաեւ դուռի աշ-
խատութեան բուժ-ողնութեանը:

Հատկանալի յե, վոր յերկրի զեկաւար տարրի՝ պրո-
լետարիատի ստողջութեանը կարմեւու յեր հիմք մեր բո-
լոր ձեռնարկումների, դրա հետ միաժամանակ խորհրդա-
յին իշխանութեանը, պետք ե ձեռք առնե՛ր համապա-
տասխան միջոցներ աստահովելու նաեւ դուռի սոցսեկ-
տորի բուժ-ողնութեանը: Զուգընթաց սրան նաեւ դու-
ղացիութեան նրա աշն մասի, վորը գտնուեալ եր ամեկի
ծանր պայմաններում, աշն ե՝ բարտակների, չքավոր-
ների և միջակների:

Վորպեսպի յուրաքանչյուր անհատ կարողանա ողտ-
վել կյանքի բարիքներից, միաժամանակ ողտակա՛ր լի-
նել հասարակութեանը, պետք ե ակտիւ մասնակցողը
լինի մեր նոր կյանքի, նոր սոցիալիստական շինարարու-
թեան. անհրաժեշտ ե, վոր նա լինի ստողջ: Այդ ձե-
ւով ել խորհրդային իշխանութեանը մոտենում ե բժըշ-
կականութեանը. վերջինս լինելու յե մարդուս ստողջու-
թեան ճակատը ու պաշտպանը: Միայն ստողջ աշխատա-
վորութեանը կարող կլինի աստահովել մեր ժողովրդա-
կան տնտեսութեան հսկա աճումը:

Առանձնապէս սուր գրված ե այդ հարցը պրոլետա-
րիատի՝ խորհրդային իշխանութեան առաջ, վորովհե-
տեւ իմպերիալիստական պատերազմից հետո, մենք ու-
նեյինք տնտեսական լրիւ քայքայում, աղքատութիւն,
տղիտութիւն, կեղտոտութիւն. մի խոսքով բոլոր
ովայաները զանազան համաճարակների և հիւանդու-
թեանների դարգացման համար:

Իսկ մենք գիտենք, վոր ուր տիրում ե կեղտ ու աղ-
քատութիւն, աշնտեղ թաղավորում են վարակիչ հի-
ւանդութեանները իսկ տղիտութեան զեկաւում՝ վարա-
կիչ հիւանդութեանները վերածւում են համաճարակ-
ների, վորոնք մեծ աղետներ են պատճառում մարդկու-
թեան և տանում բաղձաթիւ անեղ զոհեր:

Յեթե մենք հարցին մոտենանք կոնկրետ. այսինքն՝
ստողքներ, թե ինչպէս եր աստահոված դուղացիութեան
բուժողութեանը Հայաստանում, կտեսնենք, վոր դու-
լութեան ունեցող խոճովի ցանցը, այսպէս կոչված բը-
ժըշկական հատ ու կնոտ վրայանները, անշուշտ չեյին
կարող բավարարել մեր դուղացիութեան ծով կարիքնե-
րը. հետեապէս բժշկութեանն այդ ձեւով Ֆիկցիա յե և
դուղացիութեան բախան իրապէս գտնուեալ եր հեքիմ-
ների և ֆալչիների ձեռքին:

Խորհրդային իշխանութեանը հաստատվելուց հե-
տո, մենք ակնատես ենք իսկապէս յուրջ փոխիտու-
թեանների: Մեր տնտեսական կյանքի աճմանը զուգա-
հետ աճում են նաեւ մեր բժշկական կայանների թիւը
չրջաններում, կառուցվում են նոր հիւանդանոցներ,
լայնացվում ե հիւանդանոցային ցանցը, իսկ սրանք
հանդէսանում են լուսաւոր վարոս, վորոնք ձեւափո-
խում են դուղացու կյանքը և հիմք են դնում նոր կուլ-
տուրայի:

Դուղացին սովորում ե, թե ինչպէս պիտի կառու-
ցել բնակարանը և մենք տեսնում ենք, վոր դուղացու
նոր շինարարութեանը հիմնովին տարբերվում ե նախ-
կին շինարարութեանից: Գետնափոր խրճիթների վո-
լտարն այժմ բնակարանները կառուցում են գետնի յե-
րեսին, լուսամուտներով, վորոնք չկային առաջ: Գյու-

դացիութեան մեջ հետզհետե մուտք ե գործում այն հաս-
կացողութեանը, վոր մաքուր ողջ խրճիթում իր ե իր
յերեսաների համար, նույնքան անհրաժեշտ են, վոր-
քան ջուրը ե հացը: Մենք սրանով չենք ասում, վոր մեր
դյուզացին արդեն հասել ե կուլտուրական այնպիսի
մակարդակի, վոր լիովին զիտակցում ե սանիտարիայի
ե հիգիենայի տարրական կանոնները: Մենք միայն
մատնանշում ենք այն բեկումը, վորը կատարվել ե նրա
կենցաղի ասպարիզում:

Ձեզ, կուսակցական ակտիվին, անհրաժեշտ ե ձեռք
առնել բոլոր միջոցները, վորպեսզի ձեր հետագա աշ-
խատանքները դյուզում տարվին այն ձևով, վոր նրանք
կարողանան ավելի խորացնել հիշյալ ձեռնարկումների
անհրաժեշտութեանը:

Կուսավոր բնակարան ունենալու հարցը հանդիսա-
նում ե մեր իրականութեան մեջ հարվածային խնդիրնե-
րից մեկը ե դժբախտաբար այդ կարևոր խնդիրը մինչև
հիմա լրիվ չի լուսաբանվել մեր դյուզացուն:

Արեւից ստացւող լույսը հանդիսանում ե յուրա-
քանչյուր որդանիզմի դոյութեան անհրաժեշտ պայման-
ներից մեկը: Առանց արեւի լույսի չի կարող դոյու-
թյուն ունենալ ե վոչ մի որդանիզմ. մեր կազմվածքի
ամբողջութենն ու անողջութեանը մեծապես կախված ե
նրանից:

Յեթե մենք վերցնենք բուժական աշխարհը, կտես-
նենք, վոր այն բույսերը, վորոնք աճում են մութ տե-
ղերում՝ լինում են դուռնաւ, նվազ ե ունեն անհրա-
պուրիչ տեսք, որինակ՝ սունկերը:

Իսկ բնահատուկը, յերբ բույսն աճում ե արեւ-
վոտ տեղում, նա կանաչ դույն ե ունենում, լինում ե
թարմ, աճումն ել փարթամ. մի խոսքով զբաղչական

բոլոր տվյալներն ունի: Տեսնում ենք նույնիսկ, թե
ինչպես բույսերը թեքում են իրենց գլուխները դեպի
այն կողմը, վորտեղից պայիս ե արեւի առատ լույսը.
մինչդեռ յեթե նույն կանաչ ու փարթամ բույսը տեղա-
վանենք մութ բնակարան, այն ժամանակ կտեսնենք,
կարճ ժամանակից հետո նա սկսում ե թոռամել ե մեռ-
նել: Բույսերի նման ել բոլոր կենդանի որդանիզմները
կարիք ունեն արեւի լույսի, ե մենք տեսնում ենք, վոր
այն որդանիզմները, վորոնք աճում են արեւի
լույսի տակ ե ապրում են ազատ, նրանք
լինում են ավելի ամուր ե առողջ, քան նրանք,
վորոնք զրկված են այդ բարիքներից: Յեւ
բնախտաբար դյուզացու աշխատանքն ու կենցաղն
այնպես ե կազմակերպված, վոր նա իրեն ժամանակի
մեծ մասն անց ե կացնում զբոսում, բաց ողում, արեւի
տակ ե զրա համար ել նա ավելի առողջ ե, կազմված-
քով ել ամուր, քան թե քաղաքացին, վորը ստիպված ե
իրեն ժամանակի մեծ մասն անցկացնել փակ սենյակի
մեջ: Արեւի լույսը մեր առողջութեան հիմքն ե. արեւի
ճառագայթները վոչնչացնում են մարդու թշնամի միկ-
րոբները:

Այստեղից պարզ ե, վոր բնակարանների լուսավորու-
ները պիտի լինեն լայն, վորպեսզի հնարավորութեան
տրվի արեւի ճառագայթներին առատութեամբ ողողել
մեր սենյակները. մի բան, վոր դյուզացու խրճիթնե-
րում չենք տեսնում:

Շատերը վախենում են ցրտից ե լուսամուտները չի-
նում են նեղ. դա անմատուցյուն ե, քանի վոր ցրտից կա-
րելի չե պաշտպանվել կրկնակի փեղկեր շինելով: Արեւի
լույսը պիտի թափանցի մեր բնակարանների բոլոր մութ
անկյունները, պատուհանների մակերեսը պետք ե հա-

մասար լինի սենյակները հատակի կիսի մակերեսին :
Մըհնատական լուսավորումը մարդու առողջութեան հա-
մար նույնպէս ունի հակադաս նշանակութիւն . շատ
դժուր երում միջին աշխատել դործ են ածուում նախքի կամ
ձեթի ճրագները , վորոնք փշայցնում են սենյակի ողբ և
լցնում ծխով և մրով :

Ժամանակ և վերջնականապէս հրաժարվել այդ նու-
հաստական հին ու վատառողջ կանթեղներէց , և դործ
ածել սովորական նախքի սարքավորված լամպ :

Չնայած , վոր վերջինը նույնպէս տալիս է նախքի
և դադերի զոլորչիացում , վորով նույնպէս թուճափո-
ւում է ողբ , բայց շատ ավելի քիչ չափով , քան առա-
ջիններն են : Յեթե մենք վարողանանք լուսավոր բնակա-
րաններ ունենալու խնդրին դրական լուծում տալ , իսկ
դրան մենք պիտի հասնենք , այն ժամանակ-մեծ նվա-
ճում արած կլինենք սանիտարիայի տեսակետից :

Գյուղացու խրճիթը պիտի կահավորվի միայն ան-
հրաժեշտ իրերով . խիտ կահավորում ունեցող սենյակ-
ների փոշին նախ առատ և լինում և յերկրորդ՝ իրերը
պակասեցնում են խրճիթի ողի ծաւալը : Կահավորումը
պիտի լինի պարզ ու հասարակ : Իրերը լափ կլինի , յեթե
ներկված լինեն մի վորեւե ներկով , վորպէսպի հեշտու-
թեամբ մաքրվեն և միջատներ առաջ չդնեն : Ընտանիքի
յուրաքանչյուր անդամը պիտի ունենա քնելու առանձին
մահճակալ . ցանկալի չէ , վոր նա լինի յերկաթից :

Այստեղից պարզ է , վոր խրճիթի բնակելի տարա-
ծութիւնը պիտի լինի բազմաբար : Բնակարանները պի-
տի որինակելի մաքրութիւն ունենան . այդ տեսակետից
մեծ դեր է խաղում միջատների դեմ տարվելիք պայքա-
րը :

Այստեղ , ուր դոյութուն ունի կեդոտաութիւն , մի-

ջատներ եւ շատ կան : Նույնիսկ ամենալավ շենքում , յե-
թե կեդոտ և պահում , առաջ են դալիս միջատներ .
և յեթե մեծ է նրանց թիւը , այդ գեղարում ապրելի աշխ-
տի ինակարանում դատնում է անհնարին : Գիշերը նը-
րանք հարձակվում են քնած մարդու վրա և խանդարում
նրա քունը , միջդեռ քունը , ինչպէս գիտենք , չափա-
դանց անհրաժեշտ է մարդու առողջութեան համար :

Միջատները միաժամանակ տարածում են դանդաղ
վարակիչ հիվանդութիւններ , վորոնց մասին կխոսենք
հետագայում :

Հարկավոր է իմանալ , վոր լուսն բազմանում է չոր
աղբի մեջ և այն բնակարաններում , ուր հատակը հողից
է : Դրա համար եւ գետնափոր խրճիթներում նրանց թի-
ւին ավելի մեծ է , քան թե վաշտե հատակ ունեցող բնա-
կարաններում : Անհրաժեշտ է սենյակը միշտ մաքրել ,
յեթե հնարավոր է աղբն աղբել : Վաշից ապրում է սպի-
տակեղենի և շորերի մեջ , նոմանաւանդ նրանց ծալքե-
րում : Շորերը պիտի մաքուր պահել , իսկ սպիտակեղենը
փոխել տոնովայն շաբաթը մեկ անգամ . լվանալու ժա-
մանակ հարկավոր է սպիտակեղենը յեփել յետաքրած ջրի
մեջ , անիծները վիշնչացնելու համար : Ամեն անգամ շո-
րերը փոխելիս՝ հարկավոր է բաղնիք գնալ և լողանալ
սաղարմով :

Գյուղացու հետ կենակցող այլ միջատը , դա քոսի
տիգն է (գլանա) , վորը մտնելով մաշկի մեջ՝ առաջ է բե-
րում սարսափելի քոր , նամանաւանդ գլխերները : Քոսե-
լուց մաշկը բորբոքվում է և վերքոտում , վորը յերկար
ժամանակ չէ անցնում : Քոսից բժշկելը դժվար չէ , յե-
թե ճշտորեն կատարվեն բժշկի պատկերները : Բայց բա-
մական չէ քոսից բժշկելը , անհրաժեշտ է մաքրել ան-
կողմնը , վերի շորերը , իսկ սպիտակեղենը յեփել յետա-
քրած ջրի մեջ :

Անթուլյատրելի յե անասունների հետ միեկնույն չենք մեջ ապրելը :

Մեր իրականության մեջ սովորական յերեւոյթ է , յերբ գյուղացին ապրում է կենդանիների հետ միատեղ , չհաշված ընտանի կենդանիներից չնբին ու կատուններին , վորոնք միշտ շփում ունեն յերեւոյթների հետ և մասնակցում են մեր ամենօրյա կյանքին : Այդ կենդանիները բացի նրանից վոր հարուստ են լվերով ու ալ միջատներով , նրանք հանդիսանում են վորդերի տարածման աղբյուր , վորի հետեանքով մեր գյուղացիների մեծ մասը , մեծ թե փոքր , տառապում են վորդերի հիվանդությամբ :

Խրճիթի տաքացները նույնպես ունի հակայական նշանակութիւն :

Իհարկէ , անհրաժեշտ է , վոր բնակարանը լինի տաք : Սառը բնակարանում առաջ և զալիս խոնավութիւն և պատճառ է դառնում մի շարք հիվանդութիւններ : Խիստ տաքացրած բնակարանը նույնպես վնասակար է :

Մարդու օրգանիզմը սովորելով ուժեղ ջերմության՝ չի կարողանում տանել ցուրտը՝ դրա համար էլ հարկավոր է սենյակի տաքութիւնը վորոշ աստիճանից բարձր չլինի : Այդ տեսակետից խոշոր նշանակութիւն ունեն վառարանների բնութիւնը , վորոնք ասողջապահական տեսակետից քիչ թերութիւններ ունենան :

Մեր գյուղացու խրճիթում յեղած թոնիրը բացի այն , վոր չի տաքացնում խրճիթը , ալիս խիստ հակասողջապահական է :

Յերբ թոնիրը վառվում է , ամբողջ խրճիթը լցվում է ծխով , ստիպված են բաց անել յերդեկը , վորտեղից ջերմութիւնն ամբողջովին կորչում է :

Աթարի ծուին առաջ է բերում աչքերի բորբոքում : Իսկ մենք գիտենք , վոր բորբոքված դուրթյան մեջ դարձավոյ հյուսվածքը հեշտութեամբ յնթարկվում է վարակի : Ահա թե ինչու յե մեր գյուղերում աչքացալն այդքան տարածված :

Տրախոմալի համար բորբոքված աչքը պատրաստ հող է հանդիսանում :

Ահա տարակ նահաստակաւ հին կյանքն իր հակասանխտարական պայմաններով չափազանց բարենը պատ է տարբեր տարբեր հիվանդութիւնների համար : Վորպեսզի կարելի լինի պաշտպանել գյուղացու ասողջութիւնը , անհրաժեշտ է , վոր հիշատակած դուրսուցում վարժեցնել մի շարք նորութիւնների հետ , վորոնք հին կենցաղի մեջ առաջ կրերն դրական բեկում : Այն է՝ դո՞քը դատել գյուղացու խրճիթից և կատուցել բնակութիւններից հետո , խրճիթներին կից չինել արտաքնոցներ , վորպեսզի կարելի լինի մեկուսացնել մարդկային աղբը , ջրամատակարարման դորձը կարգավորել , հոսող առուների ու գետերի ջրերի փոխարեն դորձ ածել ջրհորների կամ աղբյուրի ջուր , բախրը մաքուր պահել և թույլ չտալ ճանճեր կարգանան , վորոնք վարակի տարածման լավագույն միջոցներն են : Այս ձևով գյուղացին վոր միայն պաշտպանած կլինի իր ասողջութիւնը , ալիս հիմք կդնի նոր կենցաղի :

Բոլոր այս խնդիրներին դուրսնթաց առաջ են զալիս գյուղացու անդի հացը և դրա հետ միասին մոր և մանկան պաշտպանութեան խնդիրները :

Դուք տեսնում եք , թե վորքան բազմակողմանի յեն գյուղացիութեան ասողջապահութեան խնդիրները , դուք տեսնում եք , թե վորքան սերտ կերպով են կապված կենցաղային պայմանները նրանց ֆիզիքական ասող-

Գուժյան հետ, և յեթե մենք կարողանանք բարելավել այդ պայմանները, դրանով վերջ դրած կլինենք այն բազմաթիվ տատաղանքներին և հիվանդություններին, վերոնք բացառաբար կտախած են գյուղացու կենցաղի բարելավումից:

Յեթե այս բոլորին ավելացնելի նաև գյուղացու աշխատանքի ուսումնասիրությունը և առաջարկվեն աշխատանքի նոր ու ավելի կանոնավոր ձևեր, այն ժամանակ վաղուց հետևանքներ կտառցվեն:

Ահա թե ինչու Խորհրդային բժշկականությունը նպատակ է դրել վոչ միայն բուժել հիվանդությունները, այլև միջոցներ ձեռք առնել կանխելու նրանց: Խա վերջին ձեռնարկումները կոչվում են պրոֆիլակտիկա:

Միմիայն աշխատանքի և կենցաղի առողջացման մեթոդներով մարդը ենք հուսալ, վոր մենք կկարողանանք արմատախիլ անել մեր գյուղացիության մասնալական հիվանդությունները:

Այդ նպատակով անհրաժեշտ է կյանքի կոչել մեր բոլոր հասարակական և կուսակցական կազմակերպությունները: Հարկավոր է աշխատանքի լայն ասպարեզ տալ գյուղ-խորհուրդներին, առ-բջիջներին, կոոպերատիվ կազմակերպության, բժիշկներին, ուսուցիչներին, գյուղատնտեսներին, տեխնիկներին, լայց վոր կարեւորն է, կոմսոմոլի ու պիոներական կազմակերպության ակտիվին: Այդ ձևով կարելի չէ ձեռք բերել ուսալ արդյունքներ: այդ միջոցով կարելի կլինի ավելացնել նաև գյուղի աշխատավորության և ընել նրան նոր կենցաղի կազմակերպման մեծ գործին: Այժմ մեզ համար պարզ է, վոր հիվանդություններին դեմ պայքարել հին մեթոդներով, դեղատիոյներով և կաթիլներով արդյունք չէ

ունենալ, յեթե կյանքի պայմանները պահպանում են այդ հիվանդությունները: Ահա կյանքի այդ վտաթար պայմանների դեմ է, վոր զինվելու յեն բժիշկները և առաջին հերթին արմատախիլ են անելու: Սան-պրոֆիլակտիկ և սան-լուս աշխատանքները խոշոր դեր են խաղում աշտեղ: Որինակի համար, յեթե հիվանդը տառապում է հոգացավով (բեւմատիզմով) և յերկար տարիներ բժշկվում է առանց հետեանքի, բավական է նրան պարզել, վոր հիվանդությունը հետեանք է իր խոնավ բնակարանի:

Բժիշկը բացատրելով խոնավության քայքայիչ դերն առողջության դործում և տալով գործնական խորհուրդներ բնակարանը պաշտպանելու, դուք կտեսնեք, վոր խոնավության վերացումով, հիվանդն աստիճանաբար կլավանա:

Պայքար մղվելու յե հիվանդությունը ծնող պայմաններին դեմ է այս գիտակցությունը հարկավոր է լայն աշխատավոր մասնաների սեփականություն դարձնելու յե կարեւորը:

Խնդրին այս ձևով մոտենալով՝ նշանակում է առաջին հերթին մենք առողջացնելու յենք գյուղացու կենցաղը, նրա կյանքի պայմանները:

Գյուղացու աշխատանքը նույնպես ունի բազմաթիվ սպակասություններ:

Նա աշխատում է առավոտից մինչ յերեկո, նամանավանդ ամառվա ամիսներին, վորից գյուղացին խիստ հողում է. նա քնում է քիչ, իսկ աշխատում է յերկար հետեապես թուլացնում է իր որդանիքով. իսկ թույլ որդանիքները, մենք դիտենք, քիչ են դիմացկուն կյանքի դժվարություններին և նրանք չուտ են հիվանդանում: Գյուղացիության ծանր աշխատանքի աղաղակով

փաստերից կարելի չե համարել այն բաղձաթիւ գրե-
թաները (աղետաթափությունները), վոր ունեն նրանք:
Հիմանդանոցներում կատարված գրեթաների վերաբու-
ժության 70-80 տոկոսն ընկնում է գյուղացիները վրա:

Գրեթան թուլացնում է որդանկով. գյուղացին չի
կարողանում հարկավոր աշխատանքներ տանել. քիչ չեն
նաև սեղմված գրեթաները, վորոնցից հիվանդը մեռ-
նում է: Գրեթա ունենալու դեպքում՝ իհարկե ամենից
լայ վերաբուժության գիմէն է. բայց դա խնդրի լու-
ծումը չի, անհրաժեշտ է ձևը առնել միջոցներ գյու-
ղացու աշխատանքի պայմանները բարելավելու, վոր-
պեսզի այդ հիվանդությունները չլինեն: Այս ձևով մենք
գյուղացու աշխատանքն առողջացրած կլինենք:

Հնարավոր է արդյոք, գյուղացու Ֆիզիքական
աշխատանքը մեքենայացնել, աշխեն՝ փոխարինել մե-
քենայով՝ տրակտոր, ցանոց մեքենա, կախող և այլն,
վորոնք վոչ միայն կգյուղացենն գյուղացու աշխատան-
քը, այլև կառողջացեն: Հնարավոր է: Աշխատանքի
մեքենայացման չնորհիվ գյուղացին ժամանակ կհասի
գրադվելու իր զարգացման ու կենցաղի առողջացման
խնդիրներով: Բայց այդ մեքենաները բավականին թանկ
են և անհատ անտեսությունները հնարավորություն չեն
ուրեմալ ձևով բերելու. դրա համար անհրաժեշտ է կո-
լեկտիվ անտեսություններ կազմել և ընդհանուր ուժե-
քով ձևով բերել: Խորհրդային Իշխանությունը վոչ մի-
այն ընդառաջում է կոլեկտիվ անտեսություններին,
այլև մեծ գյուղություններ և տալիս գյուղացու աշխա-
տանքը թեթեւացնելու և առողջացնելու գործում: Վեր-
ջին աարիներս խոշոր նվաճումներ ունենք այդ առաջ-
րեղում:

Յեւ այդպես, ընկերներ, մեր առածներից յերևում

է, վոր աշխատանքի և կենցաղի բարելավման միջոցով
մենք կապահովենք նաև գյուղացու առողջությունը:
Անուկա վոր հիվանդությունների դեմ պայքարի ճիշտ
ուղին, դա պրոֆիլակտիկ ուղին է, աշխեն՝ հիվան-
դությունները կանխելու ուղին: Հիվանդի բժշկությու-
նը չի մտնում մեր հիմնական խնդիրների շարքը. մեր
նպատակն է ձևով առնել միջոցներ, վորպեսզի առողջ-
ները չհիվանդանան: Սրանում է և կայանում հիմնական
տարբերությունը Խորհրդային բժշկության և կապիտա-
լիստական յերկրները բժշկության միջև:

Յեւ յեթե այդ հիմնական սկզբունքը յուրացնի
մեր աշխատավոր մասսայի կողմից, յեթե յուրաքան-
չյուր գյուղացի այդ ուղղությամբ աշխատանք թափի,
մենք վստահ կարող ենք ասել, վոր հիվանդությունները
գյուղացիության մեջ 60-70 տոկոս կպակասի:

Ձեզ վրա, վորպես ակտիվիստների, ընկնում է չա-
փազանց պատասխանատու աշխատանք Խորհրդային
բժշկության հիմնական սկզբունքի տարածման և իրա-
կանացման բնագավառում:

Մենք համոզված ենք, վոր ձեր ոգնությամբ կկա-
րողանանք մեր մասնանշած սկզբունքները լայն գյու-
ղացիական աշխատավոր մասսաների սեփականությու-
նը դարձնել:

ՓՈՔՐԻԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐՈՆԻ ԿՈԶՎՈՒՄ
ԵՆ ՄԻԿՐՈՐՆԵՐ-ՄԱՆՐԵՆԵՐ

Հայտնի չէ, վոր հիվանդությունները բաժանվում
են յերկու խմբի՝ վարակիչ և վոչ վարակիչ:

Վորպես կանոն՝ վարակիչ հիվանդությունները
հանդես են գալիս հանկարծակի. տաքությունը բարձ-
րանում է և հիվանդը ստիպված է անկողին մտնել:

Վարակիչ հիվանդութիւնները շարքին են պատկանում թոքախտը (տուբերկուլոզ), տիֆը, ծաղիկը, ժանդախտը, քուժիչը, դիֆտերիա, սիֆիլիսը, խոլերան, արքունալից փորհարինքը (դեղին տեւրիա) և մալարիան:

Վորակաղի պարզ լինել, թե ինչպե՞ս և վարակն անցնում հիվանդից առողջին, անհրաժեշտ և ավելի մոտից ծանոթանալ բնութեանը:

Սկզբում մարդիկ շատ քիչ էյին ծանոթ բնութեանը և կարծում էյին, թե դոյութեան ունի միայն բուսական և կենդանական աշխարհ, վորոնց մենք սովորական աչքով տեսնում ենք: Իրականում դուրս յեկաւ, վոր բոլորովին այդպե՛ս է: Մարդկային աչքը կարող է տեսնել վորոշ մեծութեան առարկաներ: Յեւ քանի առարկան վորքը լինի, այնքան ավելի դժվարանում է նրան տեսնելն ու վորոշելը: Բայց կան այնքան վորքիկ մարմիններ, վորոնք մեր սովորական աչքի համար անտեսանելի յեն: Մարդկային միտքը վաղուց աշխատում է դանել այնպիսի միջոցներ, վորակաղի վորքիկ անտեսանելի մարմինները կարողանար տեսնել: Աշխատանքներն այդ առարկայում պատկանելին հաջողութեամբ:

Պարզվեց, վոր յեթե առարկային նայիլի յերկուց ապակու միջով, այն ժամանակ նա կյերես ավելի մեծ:

Այդ տվյալները հետադայում ավելի մշակման յենթարկվեցին և սկզբում գտնվեց խոշորացույցը, իսկ հետադայում ավելի ձևափոխման յենթարկվելով՝ ըստացվեց միկրոսկոպը: Միկրոսկոպը բաղկացած է մեկ յերկարն սղոնձյա խողովակից, վորի մեջ դրւած են խոշորացնող ապակիներ:

Շնորհիվ միկրոսկոպի՝ առարկաները մեծանում են մի քանի հարար անգամ: Յեթե վերցնենք կանգնած ջրի մի կաթիլ և հետադանք միկրոսկոպով, մեջը կտեսնենք անհաշիվ փոքրիկ մարմնիկներ, վորոնք սովորական աչքով անտեսանելի յեն: Նրանք շարժվում են և կենարոնանում կաթիլի լուսավոր յեղրին. սրանք կենդանիներ են, վորոնք ապրում են իրենց հատուկ կյանքով:

Այդպիսի գլուար միկրոսկոպի միջոցով հսկայական նշանակութեան ունեցաւ մարդկութեան համար և բացեց մի նոր, բոլորովին անհայտ կենդանի աշխարհ, վորը մեզ անծանոթ էր մինչ այդ:

Ահա այդ կենդանիների մասին և, վոր այսոք մենք պիտի գրույց ունենանք: Այդ կենդանիներն են, վորոնք կոչվում են բակտերիաներ կամ միկրոբներ:

Ձեզ անհրաժեշտ է լաւ հիշէլ, վոր այդ փոքրիկ կենդանիները կոչվում են միկրոբներ կամ րակտերիաներ և հետադայում մենք այդ անունների հետ հանդիպելու յենք հաճախ, առանց նորից պարզարանելու: Միկրոբները գտնվում են ամեն տեղ մեծ քանակութեամբ՝ սղում, ջրում, հողում և բոլոր առարկաների վրա, վորոնց մենք տեսնում ենք: Նրանք ապրում են նաեւ մարդու և կենդանիների որդանիզմներում, բույանրի, մեռած մարմինների մեջ, փթած սրտղների և սննդամթերքների վրա:

Նրանք ամեն ժամանակ և ամեն տեղ գտնում են դարդացման համար համարաատասիան պայմաններ և սնունդ: Այդ բակտերիաների ձևը չափադանց բազմատեսակ է. նրանք լինում են՝ կետերի, ստորակետերի, սպիրայի, ջուպիկի, և այդ ձևերով: Դասավոր-

վում են նրանք նույնպես զանազան կերպ, վոմանք
զույգ-զույգ, խմբերով, վոմանք եւ շղթայաձև :

Չափազանց բնորոշ է մի հանդամանք, նրանք բազմ-
ամեում են շատ արագ, յեթե կան համապատասխան
նպաստավոր պայմաններ նրանց զարգացման համար :

Հատարակ բակտերիաները բազմանում են ստի-
րական դաժանմուն ճանապարհով . մեկը բաժանում
է յերկու մասի և յուրաքանչյուր կեսը զարգանալով՝
լրեն հերթին բաժանվում նորից յերկու մասի և այլ-
պես անընդհատ :

Ձեզ պարզ մլինի, յեթե ստենք, վոր կես ժամից հե-
տո՝ մեկը դառնա 2, մեկ ժամից—2—ը 4, մեկ և կես ժա-
մից՝ 16 և այլն, իսկ մեկ ուրիշ ընթացքում՝ նրանց թիվը
կարող է հասնել անհաշիվ քանակության : Անհրաժեշտ
է հիշել, վոր նրանք չափազանց փոքր են և հեշտու-
թյամբ մեկ կաթիլ ջրի մեջ կարող են տեղավորվել մի
քանի միլիոն բակտերիաներ : Այստեղից մենք կարող
ենք յեզրակացնել, թե ինչ ահռելի քանակությամբ կը-
բազմանան մեկ դույլ (վեդրո) ջրի մեջ : Բայց, իհարկե,
իրականության մեջ բակտերիաներին չի հաջողվել այդ-
պիսի ուժեղ թափով զարգանալ . մի շարք պայմաններ
խոչընդոտ են հանդիսանում նրանց զարգացմանը : Բակ-
տերիաները, ինչպես յուրաքանչյուր կենդանի օրգա-
նիզմ, իրենց զարգացման համար նրանք են զգում սնու-
ղի, խոնավության, ջերմության և չափազանց արագ
վոջնչացվում են այս կամ այն աննպաստ պայմանի մեջ .
բացի այդ, նրանց կլանում են ուրիշ փոքրիկ կենդա-
նիկներ . նրանց վրա ուժեղ վոջնչացնող ազդեցություն
է ունենում արևի լույսը և այլն : Յեթե չլինե՞լին այս
հանդամանքները, նրանք իրենց բազմազան ունակու-

թյամբ կլցնե՞լին ամբողջ աշխարհը : Նրանց կյանքումն
եւ տեղի ունի ուժեղ գոյության կռիվ . և նրանցից հա-
բողանում են գոյության կռիվն դիմանալ նրանք, վո-
րոնք ալելի ուժեղ են : Մենք արդեն նշեցինք, վոր բակ-
տերիաներն ապրում են նաև ողի մեջ, բայց պիտի ա-
սել, վոր ողի մեջ նրանք գտնվում են զանազան պատ-
ճառներով . նախ նրա համար, վոր ողի մեջ կա մեծ
քանակությամբ վոջի և այն տեղերը, ուր ողը մա-
քուր է, որինակ՝ լեռների և ծովերի վրա, բակտերիա-
ները չափազանց քիչ են :

Հակառակ դեռն՝ քաղաքներում, վորովհետև փոշին
շատ է, բակտերիաների քանակությունը նույնպես շատ
է ողի մեջ : Ջրի մեջ նրանց քանակն ավելի մեծ է, բայց
այս խնդրին մենք կանդրադառնանք, յերբ կխոսենք
ջրամատակարարման մասին :

Ամենանպաստավոր պայմանը բակտերիաների՝ դար-
դացման համար հանդիսանում է հողը : Վորովհետև
նրա մեջ կան մեծ քանակությամբ սնունդ, ջերմու-
թյուն և ամենակարեւորն է, բացակայում է արեթ,
սրբի ճառագայթները :

Մեկ խորանարդ հողի մեջ կա 200.000-ից մինչեւ
1.500.000 միկրոբ :

Այժմ անցնենք նրա եյությանը :

Բակտերիաները՝ կարելի չէ բաժանել յերկու հիմ-
նական խմբի . մի խումբը մարդուն բարեկամ է, կամ
ինչպես ասում են՝ օգտակար բակտերիաներ են, իսկ
մյուսը՝ թշնամիները : Սկզբում կանգ առնենք օգտա-
կար բակտերիաների վրա :

Ռույսերը, վորոնք չափազանց անհրաժեշտ են մար-
դուն, նրանց կյանքը բացառապես կախված է բակ-

տերխաներից: Յեթե հողում չլինեյին բակտերիաները, գոյութիւն ունենալ չեր կարող բուսական աշխարհը. ապելի ճիշտ, չեր կարող իրեն աճման համար ստանալ բաւարար սնունդ:

Հողում գտնվում են բակտերիաներ, վորոնք նեխման միջոցով քայքայում են որգանական ապելի բարդ նյութերը և դարձնում ապելի հասարակ:

Այդ բակտերիաների աշխատանքները տարբեր են, վորոնք իրենց աշխատանքներն սկսում են թարմ մարմինների վրա, մյուսները շարունակում են հետագա փթման ժամանակ, իսկ յերրորդ խումբը վերջնականապէս քայքայում է հողի մէջ գտնված նյութերը՝ վերածելով նրանց ապելի պարզ նյութերի, վորոնք անհրաժեշտ են բույսերի աճման համար: Դուք տեսնում եք, թե ինչպիսի աշխատանք են կատարում բակտերիաները. նրանք կենդանական մնացորդները քայքայելով՝ դարձնում են սրբող, վորոնք և սնունդ են մատակարարում բույսերին:

Շնորհիվ այդ հանգամանքի հողը մաքրվում է վեղանիների անպետք ու մեռած մնացորդներից, առանց վորի կյանքն անհնարին կլիներ:

Մենք արդեն նշեցինք, վոր անհրաժեշտ են նույնպէս համապատասխան պայմաններ բակտերիաների գոյութեան համար: Ուժեղ ցուրտը դանդաղեցնում է բակտերիաների պարզացումը. այդ պատճառով ել յեթե աննդամթերքն ուղում ենք թարմ պահել, պահում ենք սառցի մէջ կամ սառը տեղ:

Կարելի չէ նաեւ ուրիշ ճանապարհով կանգնեցնել միկրոօրգանիզմի պարզացումը, աննդամթերքը կարելի չէ

պահել ուժեղ աղի լուծվածքի մէջ, ինչպէս ասում են գյուղերում:

Մենք խոսում ենք այն բակտերիաների մասին, վորոնք առաջ են բերում նեխում. այդ բակտերիաներից գտնվում են նաեւ մարդու աղիքներում: Նրանք նույնպէս անհրաժեշտ են մարդու համար. նրանք մեր մարմնի գոյութեան դործարանում առաջացնում են աննդամթերքների նեխում, վորին ել պիտի վերադառնալ մարդու կղզիանքի վատ հոտը: Մարդն իր տնտեսութեան մէջ նույնպէս ոգտվում է բակտերիաներից: Հայտնի չէ, վոր դիմին յերկար ժամանակ մնալով՝ դառնում է քայքայի. դա հատուկ տեսակի բակտերիաների աշխատանքի հետեանք է:

Նույնը կարելի չէ ասել նաեւ կաթի մասին. կաթի թթվեցումը տալիս է բոլորիդ հայտնի մածուցը: Ընդհանրապէս բակտերիաները կաթնատնտեսութեան մէջ անհրաժեշտ են. նրանց շնորհիվ կաթից ստանում են պանիր, մածուն և այլն: Մենք ասեցինք, վոր բակտերիաները պիտի բաժանել 2 խմբի՝ ոգտակար և վնասակար: Վերը հիշատակած բակտերիաները, այսպէս ասած, մարդուն ոգտակար բակտերիաներ են, բայց կան մեծ քանակութեամբ բակտերիաներ, վորոնք վնասակար են մարդկային օրգանիզմի համար: Այս տիպի բակտերիան բնկնելով մարդու մարմնի մէջ, առաջ է բերում ծանր հիվանդութիւն:

Մի շարք համաճարակների, որինակ՝ խոլերայի, տիֆի, բուբոնի, դիֆտերիաի, և այլն. սրանք բոլորն ել վնասատու բակտերիաների արդյունք են. յուրաքանչյուր հիվանդութիւն ունի իր հատուկ բակտերիան: Խոլերայի բացիլով վարակվողն անպայման կհի-

վանդանա խորհրդով և վուչ մի դեպքում տիֆոլ կամ մի այլ հիվանդությամբ: Սխալ և այն կարծիքը, թե քու-
թեշը կարող և փոխվել գիֆտերիտի, կամ մեկ ուրիշ հիվանդության:

Կարող և իհարկե հիվանդը միաժամանակ հիվան-
դանալ նաև գիֆտերիտով, այդ կնշանակի, վուր բացի
քութեշի բակտերիաներից, նրա որդանիզմը մուտք են
դրժեկ նաև գիֆտերիտի բակտերիաները:

Ասացինք, վուր բակտերիաներն ունեն տարբեր-
աարբեր ձևեր. որինակ՝ վերցնենք թոքախտով հիվան-
դացած մեկին: Յեթե միկրոսկոպով նայելու լինենք
թոքախտով հիվանդի խորխը, կտեսնենք, վուր խորխի
մեջ կան բակտերիաներ, վուրոնք ունեն ցուպի ձև:
Գիֆտերիտի բակտերիան ունի քրոցիկ դլսի ձև և մեծ
քանակությամբ դառնում են հիվանդի բկում: Վերա-
դարձ տիֆով հիվանդի արյան մեջ դառնում են մեծ քա-
նակությամբ սպիրալաձև բակտերիաներ:

Յեթե այդ բակտերիաներից մի վորեն ձևվն ընկնի
մարդու մարմնի մեջ, այն ժամանակ մարդը կհիվան-
դանա համապատասխան հիվանդությամբ: Յեւ ահա
այս դեպքում և, վուր ասում ենք, թե մարդ վարակվել
և այս կամ այն վարակիչ հիվանդությամբ: Այժմ հա-
կանալի յե ձեզ, թե մի վորեն հիվանդությամբ վա-
րակվելու համար, անհրաժեշտ և համապատասխան
միկրոբի ներկայությունն որդանիզմի մեջ:

Ի՞նչպես և տեղի ունենում այդ:

Մենք արդեն ասացինք, վուր հիվանդի որդանիզ-
մի մեջ մեծ քանակությամբ միկրոբներ կան, վուրոնք
արատադրում են թուքի, խորխի, կղկղանքի և այլ մի-
ջոցներով. նրանք, ովքեր չվում ունեն այդպիսի հի-

վանդաների հետ, վարակվում են նույն հիվանդու-
թյամբ:

Բայց վարակն անմիջապես հիվանդից ատուղին չե
անցնում. նա անցնում և չվման միջոցով: Թուքի,
խորխի, կղկղանքի միջոցով արտադրվող բակտերիա-
ներն ընկնում են հիվանդին շրջապատող իրերի վրա և
առողջ մարդին անդուշ չվում ունենալով այդ իրերի
հետ՝ վարակվում և:

Սրա համար ել ատուղնապահան մարմիններն
ախտահանության են յենթարկում հիվանդի իրերն ու
ընտանոթանը, ուր աղբել և հիվանդը:

Ախտահանման խնդրին մենք հետադառնում նորից
կանդրադառնանք: Մեզ մնում և սրբղել այն ճանա-
պարհները, վուրով տարածվում և վարակը և այն մի-
ջոցները, վուրոնք անհրաժեշտ են որդանիզմի պահպա-
նության համար:

ՈՐԳԱՆԻԶՄԻ ԻՆԲԵԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐ ԴԵՐԸ

Մենք արդեն գիտենք, վուր վարակիչ հիվանդու-
թյունների պատճառը հանդիսանում են միկրոբները,
վուրոնք ընկնելով որդանիզմի մեջ՝ առաջ են բերում
համապատասխան հիվանդություն:

Գլխուրթյունն ուսումնասիրելով վարակիչ հիվան-
դությունների պատճառները՝ իմանալով նրանց եյու-
թյունն ու բնույթը, ձեռք և առել նրանց դեմ պայքարի
մի շարք միջոցներ: Բացի դրանից, որդանիզմում ևս
կատարվում և պայքար ներս մտած ինֆեկցիայի դեմ:
Հարկավոր և իմանալ, վուր յերը միկրոբն ընկնում և
որդանիզմի մեջ, բոլոր դեպքերումն ել առաջ չե բե-
րում հիվանդություն:

Յեթե ամեն դեպքում որդանիզմը հիմանդաւար, այն ժամանակ մենք կունենայինք մշտական սուբ-լիմ-րակիչ հիմանդութիւններ ու համաճարակներ և չիր լինի մեկը, վոր չհիմանդաւար և դրա հետ միասին կունենայինք խոշոր մահացութեան տոկոս:

Բայց մենք իրականութեան մէջ տեսնում ենք, վոր նույնիսկ համաճարակները ժամանակ ազդանալիչութեան մի մասը չի հիմանդանում: Ի՞նչով բացատրել այս հանդամանքը: Դա բացատրվում է որդանիզմի ներքին պաշտպանական ուժերով: Ինքն որդանիզմն ուժեղ պայքար է սկսում ներս մտած միկրոքներէ դեմ:

Ամենից առաջ պաշտպանութեան վորեղ միջոցներն են արդունը: Արյան մէջ գտնվում են աշտկա կոչված սպիտակ գնդիկներ: Նրանք միշտ պայքարում են որդանիզմը ներս մտնող կողմնակի մարմինների կամ մանրէների դեմ, և յեթե միկրոքն ընկնում է արյան մէջ, սպիտակ գնդիկները հարձակվում են նրա վրա և խփում:

Նույնիսկ՝ յեթե միկրոքը գտնվում է վոչ արյան մէջ, սպիտակ գնդիկները դուրս են գալիս արյան աթիւնների պատերից և գնում աշտեղ, ուր նստած է միկրոքը և նրա դեմ սկսում են ուժեղ պայքար:

Դուք տեսնում եք, թե ինչպես բնութայնոր ձեռք է առել միջոցներ մարդու որդանիզմի պաշտպանութեան համար: Բայց դա գեւ բոլորը չէ. մարդկային որդանիզմի հյութերը (հյութվածքային և այլն) նույնպես վատ են ազդում միկրոքների վրա. նրանք ազդեցութեանից վոչնչանում են միկրոքները:

Յեւ աշտեղ, յերբ վարակ-միկրոքն ընկնում է

որդանիզմի մէջ, վերջինս իրեն բոլոր ուժերը հաւաքած՝ սկսում է ուժեղ պայքար վարակի դեմ:

Պայքարի ժամանակ միկրոքներն արտադրում են թույն և թունավորում որդանիզմը, իսկ արյան հեղուկն իրեն հերթին՝ արտադրում է հատուկ հյութեր, վորոնք չեղքացնում են միկրոքի արտադրած թույնը:

Այս հանդամանքը հատուկ ուշադրութեան է արժանի. քանի վոր ողովնով ողդանիզմի այդ հատկութեանից՝ բժշկութեանը գտել է հիմանդութեանները կանխելու միջոցները:

Գիտութեան կողմից ձեռք առած նախազգուշական միջոցառումները ամբողջ սխառմը կոչվում է պրոֆիլակտիկա: Հետադայում մանրամասն կանդ կանենք նախազգուշական միջոցների վրա, իսկ այժմ ամփոփենք մեր ասածները:

Միկրոքներն ընկնելով որդանիզմի մէջ՝ ինչպես ասացինք, առաջ են բերում թունավորում, իսկ որդանիզմն իր հերթին ձեռք է ստնում միջոցներ. նա իր արտադրած բազմաթիւ հյութերով՝ ստամոքսի, լյարդի, յեթաստամոքսի գեղձերի, արյան և այլն, արթուն հսկում են որդանիզմի առողջութեան վրա: Այսպիսով առաջ է գալիս ուժեղ պայքար. և լարդ է, վոր պայքարում միշտ էլ հաղթանակում է նա, ով ավելի ուժեղ է:

Այստեղից հետևում և պարզվում է, թե ինչու Սորհրդային Իշխանութեանն իր բժշկականութեանը դնում է բոլորովին նոր ուղիներ, պրոֆիլակտիկ հիմունքների վրա: Յեթե մարդու որդանիզմը թույլ չէ, չի տառապում սննդի պակասութեանից, հուշված չէ, չի ստանում իր ուժերից վեր ծանր աշխատանք, յեթե մարդ այդհոյի չէ և որդանիզմը չի քայքայված

ալկոհոլի թուլանով, բնական է, նրա պաշտպանողական ուժերը բաշխարար իլինեն և պայքարում հաղթանակող դուրս կգա:

Այդպիսի մարդը կամ բուրբուխն չի հիվանդանում, կամ թեթևով և հիվանդանում և շուտ ել ասողջանում: Իսկ ընդհատապես՝ հյուսված ուղեանիմբը չի կաջող պայքարել, հիվանդությունն ընդունում և յերկարատև բնույթ և վերջի ի վերջո մարդը մեռնում է:

Ահա թե ինչու Խորհրդային ԽՍՀՄ-ում իր հիմնական խնդիրներին մեկն և դարձրել աշխատանքի պաշտպանություն ունենը, ահա թե ինչու բանվորների, կանանց, անչափահասների և դուռնացիների աշխատանքի պաշտպանությունը դարձել և հարվածա-յին լողունգ պրոլետարական պետություն:

Պատկերը լրիվ լինելու համար՝ անհրաժեշտ է իմանալ նաև այն, վոր միկրոբներն ընկնելով ուղեանիմբի մեջ, նրանք անմիջապես չեն առաջ բերում հիվանդություն, դրա համար անհրաժեշտ է վորոշ ժամանակ, վորպեսզի միկրոբները բազմանան և արտադրեն բազիլանին թուլան մեր ուղեանիմբը թուլանվորելու համար: Ահա այդ շրջանը, յերբ ուղեանիմբում միկրոբներն և մարմնի պաշտպանության ուժերն միջև պայքար և տեղի ունենում, կոչվում է թաղանթած կամ գոտանի շրջան:

Չնայած, վոր դադանի շրջանում ուղեանիմբի մեջ կան միկրոբներ, սակայն բժիշկը հնարավորություն չունի պարզելու հիվանդության բնույթը, վորպեսզի կարողանա կանոնավոր բժշկել: Այդպիսի դեպքում հարկավոր է շտապել, քանի վոր սխալ սկսած բժշկությունը կարող է բարդացնել հիվանդության ընթաց-

քը և հիվանդի դրությունը: Հաճախ այդ հոդի վրա բժիշկներն և հիվանդների տերերն միջև առաջ են դալիս թյուրիմացություններ. վերջիններք կարծում են, թե բժիշկն սպասողական դրությունը հետևական է նրա անհասկացողության կամ տգիտության. մինչդեռ դա անարդար մեղադրանք է բժիշկի հասցեյին: Այն ինչ, մենք կարծում ենք, վոր այն բժիշկը, վորը սպասում է միջևի հիվանդության պարզվելը, նա հմուտ է և իշխում է իր դործին, քան թե նա, ով մեծ քանակությամբ դեղեր է տալիս հիվանդին «հանգստացնելու» համար:

Վերջին պարագային դեղերը կարող են վրասել հիվանդին: Բժիշկի դեղը դադանի շրջանում լինելու յե այն, վոր նա կարողանա ոժանդակ միջոցներով ողնել սրբանիմբի վարած բնական պայքարին և վոր թե խանդարել նրան: Ուղեանիմբի ինքնապաշտպանության միջոցառումներն ամեն բանից բարձր պիտի դասել և թույլ պիտի տալ, վոր նրանք հանգեն իրենց բնական վախճանին:

Այժմ քնենք այն բուրբ անապարհները, վորոնցով վարակը ներս է թափանցում ուղեանիմբը:

Վերցնենք մաշկը. նա հանդիսանում է մարմնի արաքին պաշտպանողական ծածկույթը: Յերբ մաշկը վնասված չէ, այդ դեպքում չի կարող ներս թափանցել վորևէ վարակ. բայց բավական է, վոր մաշկի վրա առաջ դա մի չնչին քերվածք, այն ժամանակ պատկերը վորտիում է. վարակը մաշկի միջով անցնում է յեմթամաշկին, իսկ այնտեղից արյան անոթների միջոցով տարածվում է ամբողջ ուղեանիմբի մեջ:

Այդպես վարակների որինակ կարող է ծառայել՝

կարմիր քամին, սիրերախորը, ծաղիկը և սիրֆիլիսը:

Բայց լինում են դեպքեր, յերբ վարակն ընկնում և արցան մեջ անմիջապես, առանց մաշկի մետափածքի: Դուք արդեն գուշակում եք. դա առաջ է գալիս միջատների կծելու հետևանքով: Չեղանից չատերը գլտեն, վոր մալարիան տարածողը հանդիսանում և մոծակը: Հիվանդ մարդուն կծելիս՝ մոծակը ծծում և և նրա արյունը, հետո յեւ մալարիայի միկրոբները: Նույն մոծակը կծելով բոլորովին առողջ մարդու՝ վարակում և նրան մալարիայով: Մի շարք միջատներ՝ լուսն, վոջիկը և այլն տարածում են բծավոր, վորովայնային, վերադարձ տիֆ և այլ հիվանդություններ:

Ահա թե ինչու մալարիայի դեմ պայքարելիս՝ հարց և առաջանում չորացնել ճահիճները: Ճահիճներն ու ճահճուտները չորացնելով՝ մենք դրանով խոչընդոտ ենք հանդիսանում մոծակների բաղմացմանը, իսկ գուշ գլտեք, վոր նրանք իրենց գոյությունը գլխավորապես պահպանում ու աճում են ճահիճներում:

Բծավոր տիֆի համաճարակի ժամանակ գլխավոր պայքարն ուղղվում և վոջիկների դեմ, վորովհետեւ ներանք են հիվանդության տարածողը:

Քաղաքացիական պատերազմի տարիներին, յերբ չափազանց տարածված էր բծավոր տիֆի համաճարակը. ընկ. Լենինն ասաց. «Մենք հաղթեցինք սոցիալականներին, բայց հետագա մեր հաջողությունները կախված են նրանից, թե ինչպես մենք կարող ենք հաղթել մյուս թշնամուն՝ վոջիկներին»:

Յեւ հաջողություն ունեցանք, վորովհետեւ այդ պայքարիցում ևս թշնամին հաղթվեց:

Վորովայնի յերկրորդ ճանապարհը, դա մարսո-

ղության դարձարանն է, ուր ընկնում են վարակիչ հիվանդությունների բակտերիաները—միկրոբները, յերբ առողջ մարդը կերակրի հետ կուլ և տալիս նրանց: Մենդամթերքները վարակվում են հիվանդների, կամ թե չե հիվանդին խնամող պերսոնալի կողմից: Բայց այդ խնդրում խոշոր դեր են կատարում ճանճերը:

Նրանք նստելով հիվանդի արտաթորությունների վրա (կղկղանք, խորխ, մեզ և այլն)՝ ապա անցնելով սննդամթերքների, իրենց վոտքերի ու թեփերի վրա վրամ տեղափոխում են վարակը: Համաճարակների ժամանակ, մեծ դեր են կատարում ջուրը, կաթը, մրրդեղենը, կանաչեղենը, վերջիններս պատճառ են դառնում վորովայնի տիֆի, խոլերայի, դեղինտերիայի միկրոբների տարածման: Դրա համար երբ լուրջ ուշադրություն պիտի դարձնել ջրամատակարարման և այդ սննդամթերքների վրա, վորպեսզի ազատ մնան վարակից:

3-րդ ճանապարհը հանդիսանում են թոքերը, մենք արդեն ասացինք, վոր ողի մեջ գտնվում են բաղմամթիվ բակտերիաներ, նամանավանդ այն սենյակներում, ուր կան հիվանդներ: Առողջ մարդը չնչելով վարակված ողր՝ հիվանդանում է:

Այդպիսի ճանապարհով տարածվում են թոքախտ, քուբեշ, գլֆտերխտ, կարմրուկը, կապույտ հաղը և այլն: Վարակի գլխավոր աղբյուրներից մեկն էլ հոդն է: Դուք գլտեք, վոր հոդի մեջ կան մեծ քանակությամբ միկրոբներ, վորոնք մաշկի վրա մի փոքրիկ քերվածք լինելու դեպքում, ներս են թափանցում և առաջ բերում հիվանդություն: Այդպիսի հիվանդությունների շարքին են պատկանում սիրիբախտն ու

տեղանուսը: Ահա թե ինչու խստիվ արգելվում են
թարմ վերքին դնել սարգի վոստայնն ու հողը, վոր
հաճախ դործ են ածվում գյուղացիների կողմից:

Ապացուցված են, վոր մարդը մի անգամ հիվան-
դանալով վարակիչ հիվանդությամբ, արտազերելով ի-
րենն որգանիլով մեջ հակաթույն, յերկրորդ անգամ
այլևս չի հիվանդանում, ձեռք է բերում ուժեղ կա-
յունություն տվյալ հիվանդության հանդեպ: Բժշկա-
կան լեզվով այդ կայունությունը կոչվում է իմուն-
նիտետ: Ուրիշ խոսքով՝ որգանիլով այլևս յենթակա
չէ տվյալ հիվանդության: Այս հանգամանքը հնարա-
վորություն տվեց գիտնականներին մշակել մի շարք
նյութեր, վորոնք մտցնելով որգանիլով մեջ՝ ապահո-
վում ենք նրան վարակումից: Յեւ իրոք, այսոր մի
շարք հիվանդությունների դեմ գտնված են շեճուկ-
ներ, վորոնց պատվաստումով որգանիլով ձեռք է բե-
րում իմուննիտետ և այլևս նա չի հիվանդանում վորոշ
տարիների ընթացքում: Ինչպես որինակ՝ ծաղիկը,
քուժեշը, դիֆտերիա և այլն:

Ծաղիկի պատվաստը սկզբներում վերցնում էյին
ծաղիկով հիվանդ մարդուց. բայց այդ ձևը տալիս եր
խիտ քարգոյթյուններ և հիվանդությունն անցնում եր
ծանր. հետագայում սկսեցին ոգտադործել հոբիթի ծաղ-
կի պատվաստը: Վերջին ձևիւ մարդու մեջ առաջ չի
բերում ծաղիկի ծանր հիվանդություն, վորովհետեւ հի-
վանդության վարակի ուժը թուլանում է, յերբ նա
անց ենք կացնում հորթի որգանիլով:

Պատվաստման այդ ձևիւ (1789 թ.) Յեվրոպայում
լայն դործածություն ստացավ և հնարավորություն
տրվեց առաջն առնել այն հակառակած համաճարակ-

ների, վորոնք գոյություն ունեյին միջին դարերում
Յեվրոպայում: Ներկայումս ծաղիկի պատվաստը լայն
տարածում ունի նաև արևելյան հետամնաց ժողովուրդ-
ների մեջ, ուր, շնորհիւ կուլտուրական ու բարձր
հետամնացության, մեծ հունձ եր անում ծաղիկը մինչև
վերջին ժամանակներս: Գյուղացիական աշխատավոր
մասսաներն այժմ իրենք են ընդառնում և պատվաստ-
ման յենթարկում իրենց յերեխաներին:

Պետք է դիտենալ, վոր պատվաստումներն ապա-
հովում են որգանիլով հիվանդություններից միմիայն
վորոշ ժամանակ, վորի անցնելուց հետո որգանիլով
նորից յենթակա չե վարակի, հետևապես պատվաստ-
ումները վորոշ տարիներից հետո պիտի կրկնել, որի-
նակ՝ ծաղիկը 5-7 տարի անցնելուց հետո, խոլերան՝ 6
ամիս և այլն:

Ներկայումս նախադրուշական պատվաստումներ
ինչպես ասացինք, դործադրվում են հաջորդությամբ
խոլերայի, վորովայնային տիֆի, դեզինտերիայի,
դիֆտերիայի, քուժեշի և ծաղիկի դեմ:

Բացի նախադրուշական պատվաստումներից հաջո-
ղությամբ դործադրվում են նաև բուժող սինտեզներ.
որինակի համար՝ դիֆտերիայի, վորը տալիս է խոշոր
գրական արդյունքներ: Սինտեզները պատվաստվում
են հատուկ հիմնակություններում և յենթարկվում են
մանրակրկիտ ստուգման: Բոլոր պատվաստումները
կարելի չե կատարել բացառապես բժշկի հսկողության
տակ, հազվադեպ դեպքերում՝ լավ վորակադրված
միջին պերսոնալի կողմից: Պետք է նշել, վոր մեր
գյուղացիությունը դեռևս լրիվ չափով չէ գիտակցել
բոլոր տեսակի նախադրուշական պատվաստումներ

շնամակությունը՝ և հաճախ, յերբ գլուղացիության մեկ անց են կացվում վորևեւ հիվանդության դեմ նախա-
դպուշական միջոցառումներ՝ սրսկումներ կամ պատ-
վաստումներ, նա խուսափում և, կամ թե անկանոն և
մասնակցում այլ աշխատանքներին: Որինակի համար,
յեթե պետք է շորս սրսկում կատարել, յերկու սրսկու-
մից հետո դադարում և հաճախել և, իհարկե, անհրա-
ժեշտ եֆեկտ չի ստացվում, կամ թե չե պատահում և,
վոր յերկու սրսկումից հետո հիվանդանում և յերեխան
և ալլեւ չեն դիմում բժշկին: Յուրաքանչյուր սրսկու-
մից հետո կարող և պատահել, վոր որդանիզմի տաքու-
թյունը բարձրանա, քանի վոր մտցրած սիմուլէն առաջ
և բերում ուժեղ րեակցիա և որդանիզմը փաստորեն
հիվանդանում և նույն հիվանդությամբ, բայց շատ ա-
վելի թույլ, քան կարող և լինել իսկական հիվանդու-
թյան ժամանակ: Սակայն այլ յերեւույթները մեկ-
յերկու որից հետո արագ անցնում են և չեն առլիս վո-
րեվե բարդություն: Այս բոլորն ասում ենք նրա հա-
մար, վորպեսզի իրազեկ լինեք և ձեր առօրյա աշխա-
տանքի բնթացքում ոգնեք չըջաններում աշխատող մեր
բժիշկներին, յերբ նրանք նախազուշական աշխա-
տանքներ են տանում այս կամ այն համաճարակի ա-
ռաջն առնելու:

Վարդանի վրա կարողանալ բացատրել գյուղացի-
ներին նախադրուշական պատվաստումների ելույթյունը
և համոզել նրանց, դուք ինքներդ յալ ծանոթ պիտի
լինե՞ք բուրբ խնդիրներին: Մեր աշխատավոր մասնա-
ներն արդեն սկսել են գիտակցել պատվաստումների
խոշոր նշանակութունը և նրանց տված դրական ար-
դյունքները, ինչպես այդ փորձով գիտե ծաղիկ հիվան-

ՀԱՅԷՔՅՈՒՄՆԻՑ: Հարկավոր է ե՛լ ավելի բարձրացնել նը-
րանց առողջապահական զխտելիքները մահարգակը,
վորսնայի վերանան նրանց միջից ամեն տեսակի տա-
տանումները: Դժբախտաբար մենք դեռևս բոլոր վա-
րակիչ հիվանդությունների դեմ չունենք նախազգու-
շակման պատվաստման միջոցներ: Գիտական միտքն աբղ-
ուղզությամբ աշխատում է և մենք հույս ունենք, վոր
մասիկ աղաղակյում կունենանք բոլոր վարակիչ հի-
Առաջին հալացքից կարելի չէ վարձել, վաղ յերեխան հիվանդ է լուծով. աչքերը փոս ընկած և ու աակր կապտած. քիթը սրվում է, դեմքը ծեր մարդու տպավորութիւն է թողնում, մանավանդ աչքի յեն ընկնում բերանի մոտի ծալքերը: Ցերեխայի շնչատուծիւնը ծանրանում է. սկսում է շնչել մեծ ընդմիջումներով. նրոցներ է ունենում և սովորաբար ստամոքսի լուծը լինում է օրական 10 անգամից վաղ պակաս: Սկզբում արտաթորութիւնը սովորական տեսք է ունենում, բայց ավելի ջրիկ. նույնպես տարբերութիւն չի նկատուում հոտի մեջ: Վորքան ուժեղանում է հիվանդութիւնը, այնքան ավելի զգալի. փոփոխութիւն է առանում արտաթորութիւնը. դեղին գույնը չքանում է և ընդունում յեկած բրնձաջրի տեսք և ունենում է ուժեղ թթվի հոտ:

Վորքան ուժեղ է լինում օրգանիզմը, նույնքան է ուժեղ է լինում լուծը. այդ նշաններով կարելի չէ դատել հիվանդութիւն ծանրութիւնը:

Սովորաբար լուծ հիվանդութիւն ծանր դեպքերը փերջանում են մահով:

Ահա թե ինչու ծանր հիվանդութիւն ենք համարում յերեխաների ամառվա լուծը: Մեկ շաբաթ ու կիսից հետո, հնարավոր չի լինում յերեխային ճանաչել արտաքին տեսքով:

Ամառ ժամանակ յերեխայի լուծի դեպքում հարկավոր է անմիջապէս դիմել բժշկին: Յուրաքանչյուր օրվա ուշացները կարող է մեծ բարդութիւններ առաջացնել: Հարկավոր է հիվանդ յերեխային խնամել բժշկի տված խորհուրդներով. լուծը սկզբնական չըջանում ավելի հեշտ է բժշկել, քան ուշացման դեպքում:

Ինչու ամառվա լուծը վտանգավոր է. պատճառը մարդու մարմնի թուլացումն է, իսկ թուլացած օրգանիզմն ինչպես դիտներ, շուտ է յենթակա միկրորոնների քայքայիչ ազդեցութիւն:

Ամառվա ամիսներին բակտերիաների դարպացմանը նպաստում են ճանճերը: Ճանճը նստելով լուծ ունեցող հիվանդի արտաթորութիւն միջոց և այնտեղից անցնելով ուրիշ առարկաների. օրինակ՝ նստելով անդամներէրի վրա, վտակների ու թեւերի միջոցով փոխանցում է վարակի միկրորոնները:

Ամառվա լուծի դեմ մաքսելու համար, հարկավոր է պայքարել ճանճերի դեմ: Ահա ինչու խորհուրդ ենք տալիս լուսամուտներին ունենալ ցանցեր, վարպետի ճանճերը անյակները չմտնել, դրա հետ միասին հարձանճերը ծույն զննում այնտեղ, վարակի կա կեղա, փեյին, աղբակույտներ և կերակրի մնացորդներ:

Ամառը մայրը պետք է ուշի ուշով հետեւի յերեխայի կանոնավոր կերակրելուն: Ամառը յերեխային չափա-

Նուրբապ. գրույցներ—3.

դանց կերակրելը կարող է պատճառ դառնալ յերեխայի հիվանդութեան:

Պետք է նշել, վոր ամառները յերեխաներին անհրաժեշտ է ավելի պակաս կերակրել, քան ձմեռը: Մեծերը, ինչպես գիտենք, դեպի իրենց ավելի ուշադիր վերաբերմունք ունեն, քան յերեխաները: Շուրաքանչյուր հասակավորը գիտե, վոր ամառվա ընթացքում հարկավոր է ավելի քիչ ճարպային մասեր ընդունել, քան ձմեռը: Ինչու նույնը չի կարելի կիրառել և յերեխաների նկատմամբ:

Ինչպես մեծերն ամառվա ընթացքում գործ են ածում առատ ջուր և զովացուցիչ խմիչքներ, նույն կարիքն ունեն նաև յերեխաները, վորոնք շատ անգամ անուշադրութեանից տանջվում են ծարավից: Ինչ մայրեր կան, վոր այդ մասին լրջորեն մտածեն: Ամառվա ամիսներին յերեխաներին ել հարկավոր է տալ յետացրած ու ստուգարած ջուր: Այդ մասին մայրերը համապատասխան ցուցմունքներ կարող են ստանալ կոնսուլտացիաներից:

Վորքան մայրը կուղտուրապես բարձր է և կապ է պահում կոնսուլտացիայի հետ, այնքան ել նրա յերեխաների մեջ քիչ են տեղի ունենում մահացութեան դեպքեր:

Այժմ անցնենք մանուկ հասակի մյուս վարակիչ հիվանդութեաններին:

ԿԱՐՄՐՈՒԿ

Կարմրուկով հիվանդանում են համարյա թե բոլոր յերեխաները մինչև 15 տարեկան հասակը. վիճակագրութեանը պարզել է, վոր յերեխաների 90 տոկոսը հի-

վանդանում է կարմրուկով և այդ բացատրվում է նրանով, վոր այդ հիվանդութեանը չափազանց դժուրութեամբ մեկից անցնում է մյուսներին: Բավական է ոտը յերեխային մի քանի բոպե նստեցնել հիվանդի մոտ, վոր նա յեւ վարակվի:

Կարմրուկի դադարի շրջանը հաշվում է 10-13 օր. այդ ժամանակամիջոցում հիվանդութեանը բավականին ծանրանում է և դժվարացնում կարմրուկի դեմ մաքրուելը:

Կարմրուկի վարակն ուժեղ է հիվանդութեան սկզբում: Կարմրուկով հիվանդներին հարկավոր է 4 շաբաթով առանձնացնել: Կարմրուկով հիվանդների հետ շփում ունեցողները համար կարանտինը հաշվում է 14 օր:

Կարմրուկն սկսվում է բարձր տաքութեամբ, յերեխան սկսում է հազալ, ունենում է հարկուխ, առատ արցունքահոսում. յեթե նայենք յերեխայի կուրորդը, նա լինում է բորբոքված և կարմիր: Շերեխայի ընդհանուր դրութեանը լավ չի. նա անհանգիստ է: 3-4 օրից հետո յերեխայի մարմնի վրա յերեւում են բծեր (ցան):

Ինչպես կանոն, կարմրուկի ցանն սկզբում յերեւում է յերեսի, այտերի վրա, բերանի շրջապատի և ախանջների հետեւը:

Յերեք օրվա ընթացքում ցանը տարածվում է վերելից ներքեւ, հասնելով մինչև մառները և վրաները:

Ցանը կազմված է փոքրիկ հանդույցներից. սովորաբար նա շարունակվում է 40 օր. այդ օրերին տաքութեանը բարձրանում է մինչև 40 աստիճանի, վորից հետո միանգամից ընկնում է:

Այնուհետև ցանն սկսում է դուրստվել և աստի-

հանարար չքանալ. միևնույն ժամանակ մեղմանում ու չքանում են մյուս նշանները: Յերեխայի ափորժակը վերականգնում է և ամեն ինչ բարեհաջող է: Սովորաբար ալյուսի է ընթանում կարմրուկը, յեթե վորեկից բարդութուն չկա. բայց դժբախտաբար ալյուսն շատ քիչ է պատահում: Կարմրուկը հաճախ տալիս է բարդութուններ, թոքերի, միջին ականջի բորբոքում, սուսմոքսի խանգարում, լուծ և այլն: Ամենավտանգավոր բարդությունը, վորը պատճառ է դառնում հիվանդի մահացության, դա թոքերի բորբոքումն է: Վորքան յերեխայի հասակը փոքր է, այնքան կարմրուկը վտանգավոր է: Սովորաբար կարմրուկով հիվանդը, մինչև բարդությունների առաջ գալը, բժշկական սպեցիալ կարիք չի պզուցում:

Կարմրուկով հիվանդի համար մեծ նշանակություն ունի խնամքը, ինչպես և չենքի մաքրությունը, վորտեղ դնելում է հիվանդը:

Կարմրուկով հիվանդի սենյակը պետք է հաճախակի ոգափոխության յենթարկել: Հիվանդի ընչափողի վրանառված դեպքում՝ նրան անհրաժեշտ է մաքուր ոդ:

Կարմրուկով հիվանդն սկսում է լույսից վախենալ. պատճառն աչքերի մաշկաթաղանթի բորբոքված լինելն է:

Յերեխային լույսի անախտորժությունից աղաատելու համար հարկավոր է լուսամուտները ծածկել կարմիր շարով և ալդ ձևով թուլացնել ուժեղ լույսը:

Լավ է հիվանդին պառկեցնել լույսին հակառակ: Հիվանդի աչքերը հարկավոր է լվանալ բորնիկ ջրով, նույնը կարելի յե գործադրել քթի և բերանի մաքրության համար:

Կարմրուկի դեպքում հիվանդին անհրաժեշտ է քրթիկի հսկողության տակ դնել:

ԿԱՊՈՒՅՑ ՀԱՁ

Մանկական հասակի շատ տարածված հիվանդություններն են կապույտ հաղը:

Կապույտ հաղը խիստ վարակիչ հիվանդություն է:

Այդ հիվանդությամբ յերեխաները սովորաբար հիվանդանում են իրենց կյանքի առաջին տարիներում:

Այդ հիվանդությունը փոխվում է հիվանդից առաջին հաղի ժամանակ թքի և լորձոնքի միջոցով վորե իր մեջ պարունակում է միկրոբներ: Այդ հիվանդությունը յերեխաները տանում են շատ ծանր. նա կարող է շարունակվել մի քանի շաբաթ և նույնիսկ ամիսներ:

Սովորաբար կապույտ հաղը բարձր տաքություն չի տալիս. հազն ունենում է կրկնումներ (պրիստուպ):

Թեթև տեսակը տեղում է 2 շաբաթ. սակայն հաղը վարող և դառնալ տեսական և ալդ ժամանակամիջոցում նա կարող է ընդունել հատուկ արտահայտություն՝ «հաչի» բնույթ, վորը բնորոշ է կապույտ հաղին և ժողովրդական ընդվով կոչում ենք «հաչի հաղ»:

Հիվանդությունը վարակիչ է համարվում գլխավորապես առաջին 2 շաբթում, յերբ դեռ չի սկսված «հաչա հաղը»:

Կապույտ հաղը հատուկ է նրանով, վոր ուժեղանում է գլխերները. ջղաձգական հաղը լինում է ընդամիջումներով (պրիստուպներով). հաղի ժամանակ հիվանդի յերեսի վրա նշմարվում են ցնցումներ, յերեսը կաղրտում է, վորի համար ել հառաբակ ժողովուրդն

անախանում և «կապույտ հագ»։ Պրիստուպները վերջա-
նում են առատ լորձուներով և հաճախ ել հետ տալով։

Հագի պրիստուպների ժամանակ մարդն աշխարհի աը-
պավորություն և ստանում, կարծես յերեսան խեղդ-
վում և. նա ողն ուժեղ ներս և շնչում, վորի ժամանակ
լավում և առանձին սուլոց. պրիստուպից հետո յերեսան
հանգստանում և մինչև նոր պրիստուպը։

Այդ պրիստուպներն ոբւա մեջ կարող են կրկնվել
մինչև 20 անգամ և ավել. ըստ պրիստուպների դատում
են հիվանդության ծանրությունը։

Արտաքին տեսքից հեշտ և վորոշել կապույտ հա-
գով հիվանդին. նրա յերեսն ուռած և լինում, կոպերը
լիված, աչքերը բորբոքված և արյունալից։

Կապույտ հագի ժամանակ քթից հաճախակի արյու-
նահոսություն և տեղի ունենում։

Պարզ և վոր կապույտ հագն ուժեղ կերպով քայքա-
յում և հիվանդին, վորովհետև հիվանդը չարունակ կե-
բածը հետ և տալիս, քունն անհանդիստ և, ախորժակ չի
ունենում, վորի հետևանքով թուլանում և, դուռառ-
վում և խիստ նիհարում։

Կապույտ հագը չունի հատուկ բժշկություն։ Հի-
վանդներին հարկավոր և պահել մաքուր օդում. լավ և
ծովափ և լավ յեղանակներին դուրս տանել բնակարա-
նից բացողյա դրոսանքի։

Կապույտ հագով հիվանդներին հարկավոր և տալ
թեթեւ և աննդարար կերակուրներ, լավ և պրիստուպից
անմիջապես հետո։

Հագի պրիստուպների ժամանակ յերեսային հաբ-
կավոր և պահել կանգնած դերքով, դուրսը քիչ թեք,
դուրսը բռնած ձեռքերում։

Պրիստուպից հետո յերեսայի բերանը մաքրել լոր-
ձուներից։ Կապույտ հագի բացիլները չափադանց նուրբ
միկրոքներ են. նրանք վոչնչանում են ախտահանիչ բու-
լոր նյութերով։

Հիվանդության առաջն առնելու համար, սեհրա-
ժեշտ և հիվանդի քթի լորձուները, խորխը և հետ ավաճե-
ախտահանել։

Կապույտ հագը նույնպես դուրի չէ բարդություն-
ներից դրանց թվին և պատկանում թոքերի բորբոքու-
մը։

Խ Ո Ջ Ո Ի Կ

Խոզուկն ել յերեսանների հատուկ հիվանդություն
և։ Այդ հիվանդության ժամանակ մեծանում են ականջի
մոտի գեղձերը և ալյանդակում յերեսայի դեմքը. դրա
համար ել կոչվում և «խոզուկ»։

Սովորաբար ուռուցքը կոշտ և լինում. այդ հիվան-
դության ժամանակ առանձին փոփոխություններ չեն
լինում. հիվանդները դանդաղում են ուտելուց, վորի
ժամանակ դժվարանում են ծամել։

Հիվանդը բարձր տաքություն չի ունենում և հի-
վանդությունը տեւում և առանց դողոցքի։

Հիվանդությունը սովորաբար թեթեւ և անցնում և
առանձին բժշկություն չի պահանջում։ Հիվանդի դրու-
թյունն ավելի թեթեւացնելու համար հարկավոր և ու-
ռուցքին քսել լանոլինի ոծանակ կամ մի վորելից և հա-
սարակ մաղ։

Բարդություններից պետք և հիշատակել տղաների
ձվերի ուռչելը, վորը ցավ և պատճառում և հիվանդու-
թյան հետն ել անցնում և։

Ծաղիկ հիվանդութիւնը հատուկ է բոլոր հասակներին. չափազանց վարակիչ է և վարակւում են դէրտ-մորտապես ծաղիկով հիվանդներէն: Գաղտնի չըջանք տե-վում է յերկու չարաթ:

Հիվանդութիւնն սկսւում է հանկարծակի տաքու-թյամբ, մորը հասնում է մինչև 40 աստիճանի: Հիվանդն զգում է մեջքի ցալ և ընդհանուր թուլութիւն: Յե-րեք օրից հետո յերեւում է ցան. սկզբում ճակատին, քթին, վերին շրթունքներէ վրա, պատում է ամբողջ յե-րեսը և ապա տարածւում է մօղ մարմնի վրա: Ծաղիկ ցանը սովորաբար տեւում է յերեք օր, մօրից հետո տա-քութիւնն ընկնում է. բծերը կրում են կաշվի վրա բարձրացած պուտերի բնույթ:

Պուտերը փոխւում են բշիկներէ, վարի ժամանակ տաքութիւնը նորից բարձրանում է: Թարախով լցւած բշիկներէ միջին մասը փոս է լինում, վորոնք չորա-նում են, կեղեւի նման թափւում, թոյնելով ամբողջ կյանքում սպի:

Բնական ծաղիկ պատճառած մահացութիւնը հա-տում էր մինչև 40-50 տոկոսի. նա կախւած է համաճա-րակի ուժից: Հաճախ է պատահում, յերբ ծաղիկ բծերը կապտում են և դրա հետ միասին մաշկաթաղանթի վրա յերեւում են կապտածներ, արյունալի կետեր. նման ծաղիկը կոչւում է, «սեւ ծաղիկ»:

Վերջինս համարյա թե միշտ էլ մահով է վերջա-նում:

Բնական ծաղիկը միշտ էլ թողնում է հետքեր (չո-ւրուս):

Ծաղիկ բծերը կարող են առաջ գալ բերանում, շքն-չափողում: Ծաղիկ բարդութիւններէն են՝ թոքերի խորքոքում-պլեւրիտ, աչքերի և միջին ականջի բորբո-քում:

Առանձնապէս յերկար կանգ չենք առնելու այդ մա-հացու վարակիչ հիվանդութիւնների վրա, մորովհետեւ դրա դեմ 1796 թ., շնորհիվ անգլիական բժիշկ Ջեննէթի, դոնված է սրակելու միջոց և ներկայումս լայն շափով ոգտւում են այդ դուռով յերկրագնդի բոլոր մասե-րում:

Խորհրդային Խշխանութիւնն ընդունել է պարտա-դիր ծաղիկ պատվաստումը: Շնորհիվ այդ դուռի, մենք զերծ ենք պահում միլիոնավոր կյանքեր մահից. մեր դուղացիութիւնն արդեն ինքը զգում է ծաղկա-հառման նշանակութիւնը և ինքն է պահանջում յերե-խաներին պատվաստել:

Ծաղկահատում անհրաժեշտ է 7 տարին մեկ կրկնել:

Շնորհիվ պարտադիր ու ճրի ծաղկահատման, խոր-հրդայնացումից հետո վոչ միայն համաճարակներ, այլև առանձին ծաղիկ հիվանդութիւն գեպքեր չեն յե-ղել: Խորհրդային Հայաստանում ուղի ուշով հետեւելու չենք, մորակեղի վոչ մի յերեխա չմնա առանց պատվաս-տի. դրանով մենք մշտապէս ապահովւած կլինենք ծաղ-կի վտանգից:

Հաճախ այդ հիվանդութիւնը չիոթում են ջրծաղ-կի հետ. պետք է ստել այդ յերկու հիվանդութիւններն իրարից տարբեր են:

Ջրծաղիկը թեթեւ հիվանդութիւն է. մահացու-թիւն գեպքեր համարյա թե չի տալիս, բոլոր հիվանդ-ներն էլ համարյա թե անխտիր լաւանում են: Վորեւ

դշուղում բնական ծաղիկ յերեվալու դեպքում, հարկա-
վոր և անմիջապես միջոցներ ձեռք առնել հիվանդին մե-
ղուսացնելու. լավ և ուղարկել հիվանդանոց, իսկ մնա-
ցած յերեխաներին անխառն պատվաստել:

Մեզ մնում և կանգ առնել սուր վարակիչ՝ դիֆտե-
րիա հիվանդության վրա: Մանկական մյուս բոլոր սուր
վարակիչ հիվանդությունների վրա մենք կանգ չենք
առնի, շնորհիվ նրան, վոր Առժողովոմատն արդեն հրա-
տարակած ունի մի շարք հանրամատչելի բրոշյուրներ՝
սանլուս դրադարանի սերխա, վորոնցով ասպհովված և
յուրաքանչյուր դշուղսորհուրդ:

Դ Ի Ֆ Տ Ե Ր Ի Տ

Դիֆտերիա հանդիսանում և հատկապես յերեխաների
հիվանդություն. ինչպես մյուս վարակիչ հիվանդու-
թյունները, նույնպես և դիֆտերիա մահացության
մեծ տոկոս և տալիս յերեխա հասակում. հիվանդու-
թյան մեծ տոկոսն ընկնում և 1-ից մինչև 5 տարեկան
հասակի վրա: Դիֆտերիա, ինչպես և քութեչը կապ-
ված են կլիմայական պայմանների հետ: Դիֆտերիա հի-
վանդությունը մեծ տարածում և ունենում գլխավորա-
պես աշնան և ձմռան ամիսներին:

Սովորաբար դիֆտերիա համաճարակը դարձանում
և դանդաղ, կաղմելով այստեղ այնտեղ վարակման բներ
(очаги):

Դիֆտերիա վորոշելն առանձին դժվարություն չի
ներկայացնում, քանի վոր մեզ հայտնի յե, թե ինչ միկ-
րոբներ են տարածում այդ հիվանդությունը:

Միկրոբը գտել և հայտնի գիտնական ԼՅՈՖԼԵՐԸ,
վորը հավերժացրեց իր անունն այդ գյուտով:

Դիֆտերիա միկրոբներն ուժեղ թույն են արտա-
դրում, վորը ծծվելով արյան մեջ, թունավորում և յե-
րեխայի որդանիզմը: Դիֆտերիա դադանի չըջանը հաշ-
վում և 3-4 օր, վորից հետո յերեխայի տաքությունը
լարձրանում և. հիվանդը գանգատվում և կոկորդի ցա-
վից: Կոկորդի գեղձերի մաշկաթաղանթը պատվում և
բաց գույնի մոխրագույն վրառով:

Դիֆտերիա վնասելով կոկորդի գեղձերը՝ իր դար-
գացման ընթացքում, տարածվում և դեպի շնչավորղը:
Շնչավորղի վնասված ժամանակ նկատվում և ձայնի
խրպոտություն, առանձնահատուկ հազ և շնչավորղի նե-
ղանալ: Հիվանդը շնչում և շատ ծանր, անհանգիստ և
լինում, հաճախակի փոխում և դիրքը, յերեսը գունատ-
վում և ու կապտում: Հիվանդի շնչառությունն այդ
ժամանակ ծանր և և հազն աղմկալի. ողը դեպի թո-
քերն անցնում և սղմված ճանապարհով. հաճախակի
շնչառությունը լինում և մաերեհային, հիվանդն ուշքը
կորցնում և մահանում և:

Այդպես և լինում, յերբ իր ժամանակին միջոցներ
ձեռք չեն առնվում և ուշ ենք հայտնում բժշկին:

Շնորհիվ այն հանդամանքի, վոր դանդաղ են դիֆ-
տերիա մանրները, բավականաչափ թեթևանում և
նրա դեմ պայքարը. մեր լաբորատորիաներում պատ-
րաստվում են հատուկ բուժիչ հակադիֆտերիալին չի-
ճուկներ, վորով սրակում են դիֆտերիաով հիվանդ յե-
րեխաներին և ազատում վտանգից:

Վիճակագրական տեղեկությունները պարզում են,
վոր առաջներում, յերբ դեռ չեր դանդաղ դիֆտերիա
միճուկը, մահանում էին հիվանդները 60 %-ը, իսկ
այժմ 10 %-ը. և այն ել, յերբ ուշ ենք բժշկ հրավի-

բում և ուշ և կատարվում հակադիֆտերիատային շփուկի սրսկումը: Ժամանակին սրսկված յերեխաները մահվան դեպքեր չեն տալիս, բայց ևլ ատոլջանում են:

Դիֆտերիաի ժամանակ մեծ նշանակութուն ունեն կանխիչ միջոցները: Յեթե մի վորեւ քնտանիքում դիֆտերիաի դեպք ե անդի ունենում, ալդուղ զանված բոլոր յերեխաներին սրսկում են հակադիֆտերիատային շիճուկ և ալդ ձեւով ապահովված կլինեն վարակից:

Շնորհիվ դիտության ձեռք առած միջոցների, դիֆտերիաի սոսկալի վտանգը, վոր առաջներում հընձում եր յերեխաներին, ալսոր կասեցված ե. սա կըկին անգամ սոպացուցում ե, թե ինչպես դիտությունը և դիտության մարդիկ, տարված ատոլջապահության դործով, նորանոր գլուտեր են անում միաստատունքից պաշտպանելու մարդկությունը:

Մեր գլուղացիությունը պետք և ալբ բոլորն իմանա և լայն չափով ընդատալի նրանց, ովքեր կոչված են կյանքում անցկացնելու դիտության ձեռք ստած բայոր միջոցները:

ԲԱՆԻՏ (անգլիական ախտ)

Մենք կանդ կառնենք մանուկ հասակի մի շատ տարածված հիվանդության վրա, վորը կոչվում ե անդլիական հիվանդություն կամ Բանիտ:

Դուք հաճախ պատահում եք դուռտա, թույլ, մեծ դիտով, ծուռ վոտներով, մեծ փորով յերեխաների, վորոնց ընտկան աճումը հետ ե մնում իրենց հասակակիցներին:

Բանիտով հիվանդ յերեխաներն ավելի թույլ կազմ-

վածք ունեն, իսկ դուք գլտեք, վոր թույլ սրգանիզմը թույլ ել ինքնապաշտպանություն ունի:

Չնայած վոր բախտը մահացու չե, լայց բախտիկ յերեխաները գլուրությամբ յենթակա յեն ամեն տեսակի հիվանդութունների: Անդլիական ախտը վոսկորների հիվանդություն ե. յերեխայի վոսկրային հյուսվածքի պնդանալն ուշանում ե և մարմնի ծանրության աղղեցությունից առաջ ե գալիս մարմնի մասերի անկանոնություններ, վորոնք մնում են մինչև կյանքի վերջը:

Ալդ հիվանդության պատճառները շատ են և մենք կանդ կառնենք գլխավոր մոմենտների վրա. բախտի հիմնական պատճառներից մեկը, յերեխայի անկանոն սնվելն ե. փոքր հասակում մանուկը սնվում ե վոչ թե մոր կաթով, ալլ արհեստական կերակրով և անբավարար: Իսկ դուք գլտեք, վոր նման դեպքերում, առաջանում ե ստամոքսաղիքային խանգարում, վորը հալու մաշ ե անում յերեխային ու թուլացնում ե նրա սրգանիզմը: Լուծն ուժեղ մղում ե տալիս բախտի դարգանալուն:

Վոչ պակաս խոստատվոր պայման են ներկայացնում գեանեալոր ու խոնավ նկուղները, ուր խիստ պակասում են թարմ ողը և արեղակի ճառագայթները: Հիվանդ ծնողների յերեխաները նույնպես կարող են բախտով տառապել. վերջին ձեւը կոչվում ե լո ծնե-ծառանդական հիվանդություն:

Բախտ ունեցող յերեխաները տառապում են արյան պակասությամբ, մարմնի թուլությամբ, ջղախությամբ, չնչաության դործարանների հիվանդությամբ և շատերը յենթակա յեն թոքախտի:

Ալդպիտի յերեխաներին շատ նստելուն սովորեցնելն

առաջացնում է վողնաչարի ծուլթյուն, ձեւափոխում է կոնքի վոսկոբները, վորոնք մեծ նշանակութիւն ունեն աղջիկներին համար:

Բախտով յերեխաների աստամներն աւել են դուրս գալիս և շուտ ել փչանում են: Շնորհիւ նրանց մկանունքների թուլութեան, դադերի աղղեցութեամբ լայնանում են աղիքները, ստամոքսը և ունցնում յերեխայի փորը:

Բախտավորներն ունենում են վզի և թեւերի տակի գեղձերի լայնացում:

Բախտ հիվանդութեան դեմը կարելի չէ առնել նախադրուշական միջոցներով և կյանքի վատթարագույն պայմանների դեմ պայքարելով:

Բախտով յերեխաներին անհրաժեշտ է վերամիշակելով հարուստ պտուղներ ու կանաչեղեններ տալ, պահել բացողյա, լավ անել, իսկ լավագույնն է նման գեպներում դիմել կոնսուլտացիայի բժշկի հաճախակի խորհուրդներին:

Ս Ի Ֆ Ի Լ Ի Ս

Սիֆիլիսը վեներական հիվանդութիւններից ամենից վտանգավորն է: Նա պատկանում է սոցիալական չարիքների շարքին: Զբուծված սիֆիլիսը խրոնիկ կարող է դառնալ և հիվանդի կազմվածքի մեջ առաջ բերել բարդութիւններ ու քայքայում: Սիֆիլիսն արշաւ հիվանդութիւն է և ունի իր հատուկ միկրոբները՝ սպիրոխետները: Սիֆիլիսի պատմութիւնը շատ հին է. ցեղրոպայում նա հայտնի յեր դեռևս 15-րդ դարից: Ստուգված է, վորքան անապահով ու տղետ է աղքատ-

թեանը լուծվումը, այնքան նրանց մեջ շատ է տարածված այդ հիվանդութիւնը:

Սիֆիլիսի վարակն անցնում է առողջին, յերբ սպիրոխետները մտնում են առողջ մարդու մարմնի մեջ, մաշկի վրա յեղած վորեւէ ճանկովածքից: Սիֆիլիսի վարակը տարածվում է սեռային և արտասեռական ճանապարհով. որինակ՝ համբուրլի, ծխախոտի, բաժակի, գդալի և այլն: Սիֆիլիսով հիվանդի թուրք, վորը հարուստ է սպիրոխետներով, կարող է մնալ բաժակի, գդալի, ծխախոտի վրա և անցնել առողջին, յերբ վերջինս, առանց մաքրելու, դործածում է այդ իրերը և բերանի մեջ ել ունի ճանկովածքներ կամ վերքեր: Շատ մայրեր սովորութիւն ունեն հարեանի կամ վորբ յերեխաներին կերակրել իրենց կրծքով. յեթե նորածին յեթեխան տառապում է ժառանգական սիֆիլիսով, նա կը վարակի ծիծ ալողին: Շատ յերեխաներ սիֆիլիսով վտակվում են համբուրլի միջոցով:

Պիտի խտով արդելիլ մանուկներին համբուրելը: Հյուաններն ու կոշկակարները սովորութիւն ունեն մխիւսերը բերանն առնել, վորով վարակի պատճառ են դառնում:

Ստուգված է, վոր գերձակներն ու կար անողները սիֆիլիսը տարածում են ասեղների և գնդասեղներ միջոցով: Բայց ամենից շատ սիֆիլիսի տարածողները յեղել են սրբավայրերն ու յեկեղեցիները: Մոլեռանդ ու կրոնամոլ ամբոխը «սուրբ գիրքն» ու «ամենագոր» խաչը համբուրելով՝ մեծապես տարածել են սիֆիլիսը: Այնպես վոր կրոնը բացի մարդկանց միտքն ու ուղեղը թմրացնելուց, մեծապես վնասել են նաև նրանց ֆիզիքականը: Արտասեռական միջոցներով վարակված հիվանդներ-

բի տոկոսը նույնպէս մեծ է : Վերջին ձեւով տարածված վարակն ալիւլի վտանգավոր է , քանի վոր նրա հայտնաբերումը դժվար է : Հիվանդը չի կասկածում , թե ինքը սիֆիլիսով հիվանդ է , չի բուժվում և հետագայում ել պատճառ է դառնում վարակի տարածմանը , մտնալով անդամների և մերձավորների մեջ : Դրան ել պիտի վերադրել այն փաստը , վոր կան դյուղեր և բնասանքներ , վորոնք գլխովին տառապում են սիֆիլիսով :

Մի ժամանակ Հայաստանում ևս կարծում էյին , թե սիֆիլիսը մեծ տարածում ունի : Սակայն վերջին տարիների դիտական արշաւները , կատարված մեր Վենիստալիտաի կողմից , ասպցուցեցին , վոր Աղբարայի , Բապարգեհարի , Բալապետի շրջանների սիֆիլիսի տոկոսները փոքր են : Թուրքական այդ շրջանները , վորպէս անասնապահական բարձր շրջաններ , դաշնակ չափնիստները սիֆիլիսի աղետով են վորակել , պարզապէս այդ վայրերի աշխատավորութեանը տնտեսական փնա՝ հասցնելու համար :

Նացիոնալիստական վատթարագույն պայքարի ձեւերից մեկն է դա :

Արտասեռական սիֆիլիսի տարածումը կապված է մեծապէս կենցաղային պայմաններէ հետ , հետեւապէս մեծ ուշադրութեան պիտի դարձնել աշխատավորութեան կենցաղի բարելավելուն :

Սիֆիլիսի նշաններն անմիջապէս չեն արտահայտվում . առաջին նշանները յերեւում են մոտավորապէս 4 շաբաթից հետո : Այդ շրջանը կոչվում է սիֆիլիսի գաղտնի շրջան . վորի ժամանակ միկրոբները բազմանում են և արտահայտվում են հիվանդի մարմնի վրա փայտե նշանով : Յեթե վարակը տեղի չե ունեցել սեռա-

կան ճանապարհով՝ նշանները յերեւում են սեռական դործարանների վրա , իսկ յեթե տեղի չե ունեցել արտասեռական ճանապարհով՝ մարմնի զանազան մասերում . որինակ՝ դեմքի , բերանի , լեզուի , ձեռքի , կրծքի և այլն :

Վարակի տեղը սկզբում կարծրում է , ապա դոյանում է սոսորական սղուակ , վորը մոշ ցալում է և վոշ ել բոր դալիս : Մի քանի օրից հետո սղուակի կեղեվը սղուակում է և տեղը բացվում է աննշան խոց : Խոցը չի թարախոտում , կլորածել է , հասակը պղնձագույն—կարմիր , կողերը հալասար . չոչափելիս հասակը և կողերը կոչա են . դրա համար ել առաջին նշանը կոչվում է կոչա շանկր , վորը տարբերվում է կակուղ շանկրից : Յեթե հիվանդը , առաջին նշանը յերեւալուն պէս , բժշկվում է յրջորեն , հիվանդութեանը խրանիկ բնույթ չի ստանում , չի բարդանում և սիֆիլիսը շանկրով ել վերջանում է ու բուժվում : Հակառակ պարագային առաջանում է սրգանիզմի ընդհանուր թունաւորում , վորի առաջը մեծ դժվարութեամբ է առնվում :

Շանկրի յերեւալուց մեկ ամիս անց յերեւում են յերկրորդ շրջանի նշանները : Հիվանդի ամբողջ մարմնի , գլխավորապէս կրծքի , և հապա թագանիքների վրա՝ բերանի , քթի , բերանի , կողերի , յերեւում են զանազան մեծութեամբ կարմրագույն բծեր , կետեր ու բշտիկներ , վորոնք ցալ չեն պատճառում , բոր չեն դալիս , վորոշ ժամանակից հետո չորանում են ու թափվում , իսկ նրա ժամանակից հետո չորանում են յերեւում : Այդ բշտիկների , խորանց տեղը նորերն են յերեւում : Այդ բշտիկների , խորանցիկների մեջ գտնվում են սիֆիլիսի միկրոբներ՝ սպիրոխեաներ : Յերկրորդ շրջանի նշանները չեյն արտահայտվի , յեթե հիվանդը , ինչպէս ասացինք , առա-

ջին նշանների արտահայտութիւնից հետո անմիջապէս բժշկւած լինելը: Յերկրորդ շրջանը տեւում է յերկար տարիներ. հիվանդութիւնն այդ շրջանում կարող է արտաքինապէս անհայտանալ, բայց ներքնապէս իր քայքայիչ աշխատանքները շարունակել:

Յերկրորդ շրջանում հիվանդի բժշկութիւնը յերկարատեւ է և հարկավոր է համընթացաբար տանել: Առաջին և յերկրորդ շրջաններում հիվանդութիւնը վարակիչ է, հատկապէս յերկրորդ շրջանում. այնպէս վորթե՛ հիվանդը և թե չընտանեացը պիտի խիստ զգուշութիւն պահպանեն, դուռնան շփումներից. հիվանդի ամանները պիտի առանձնացնել. նրանցով չպիտի ոգար վէն առողջները: Յերկրորդ շրջանը վտանգավոր է նաև նրանով, վոր սիֆիլիսը կարող է անցնել ժառանգներին, հիվանդոտ մայրը կարող է ունենալ սիֆիլիսոտ ժառանգներ:

Յերկրորդ շրջանը, վորը յերեւման և դալիս տարիներէ ընթացքում է հետեւանք և անկանոն բժշկութեան, արտահայտում է նրանով, վոր հիվանդութիւնն անցնում է ավելի խոր որդաններին, վոսկորներին, մկանունքներին և այլն. առաջ են գալիս մարմնի զանազան մասերի փթումներ, ուռուցքներ, կոշտեր, վորոնք կոչւում են գումմա: Հիվանդութիւնը խորնիկ բնույթ է ընդունում, բուժումը դժվարանում է ու յերկարատեւ դառնում, իսկ հետեւանքները լինում են ծանր:

Սիֆիլիսի տարածման գլխավոր պատճառներն են՝ սոցիալութիւնը, պոռնկութիւնը ու հարբեցողութիւնը:

Իբր պայքարի գլխավոր միջոցներն ուղղված են ինկուբացիոն ժառանգութիւն մնացած այդ մեծ տիտեաների դէմ:

Վորքան մարդ կուտուրական է ու գիտակից, այնքան նա ազատ է հասարակական այդ խոշոր աղետներէ:

Հետեւապէս մեծ ուշադրութիւն է դարձնելու գյուղերի աշխատավորութեան կուտուրական մակարդակի բարձրացման վրա:

Սիֆիլիսը բուժելի հիվանդութիւն է. վորքան շուտ սկսվի նրա բուժումն ու կանոնավոր տարալի, այնքան շուտ կառողջանա հիվանդը: Անկանոն ու թերի թողած բժշկութիւնը նույնքան վտանգավոր է մարդու համար, վորքան չբուժվելը:

Բուժվելու համար պիտի գլմել վէն-Դիսպաներ, ուր ունենք վորակավոր մասնագետ բժիշկներ, վորոնք կարող են նորագոյն միջոցներով բժշկել սիֆիլիսով հիվանդներին և ապահովել նրանց կյանքը հետագա վտանգներից:

ՄԱՍՈՒՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գյուղական մասերների նպատակը բազմակողմանի յե. նախ՝ մասերները նպաստում են յերեւմաների առողջութեան պահպանման, 2) գյուղի աշխատավորութեան ջութեան պահպանման, 3) գյուղի աշխատավորութեան կենցաղի մեջ մտցնում են նորութիւններ և պայքարում են հին ալլանդակ սովորութիւնների դէմ, 4) պարում են յերեւմաների մահացութիւնների դէմ և 5) մոտավոր գլխավորն է, ազատում են յերեւմանի պահելու պարտականութիւններից և հնարավորութիւն է տրվում մասնակցելու դաշտային աշխատանքներին:

Գյուղերում յերկու տիպի մասերներ ունենք՝ մշտական և չարժական: Առաջին տիպի մասերներին գյուղեկում հատկացվելու յե լավագոյն շէնքերից մեկը և պիտի ունենա ընդարձակ ծառադարձ բակ, յերեւմաների

բացառյալ խաղերի համար: Կամ է, վոր մասերի շենքը
զանփի չըջտակալուամ, ալյկիներից կամ պարտեզներից
մեկում: Մշտական մասրներում ընդունում են 1-5 տա-
րեկան յերեխաներին, վորոնք կարիք չունեն մոր կա-
թի:

Շարժական մասրները սովորաբար գտնվում են
դաշտային աշխատանքների վայրերում, վորպեսզի մաշ-
րերն աշխատանքի դադարի միջոցներին հնարավորու-
թյուն ունենան մանուկներին ստիներով կերակրելու:

Մշտական մասրները հիմնականում տարբերվում
են շարժականներից նրանով, վոր նախապես նկատի չե-
առնվում նրանց անհրաժեշտ բոլոր հարմարություննե-
րը. ննջարաններն առանձին են, ճակարանն առանձին,
լողաբանները, խոհանոցներն ու պահեստներն առան-
ձին:

Հնարավորություն կա ժամանակ առ ժամանակ յե-
րեխաներին բժշկական քննության յենթարկել և իրակա-
նացնել սանիտարական ու առողջապահական միջնամի-
սականները՝ բնակարանների ու արտաքինոցների ար-
տահանում, միջնատների դեմ պայքար. մի խոսքով՝
վողջ շենքը պահպանել որինակիլի մաքրության մեջ:

Մշտական մասրները յերեխաների խնամքի հե-
մաժամանակ տանում են նաև վորոշ գատտիարակա-
կան-ցուցադրական աշխատանքներ:

Առավտաները, նախքան յերեխաների մասը գալը,
բոլոր սենյակները պիտի մաքրված լինեն ու ողափոխու-
թյան յենթարկած, վորպեսզի սենյակների ողը միշտ ել
մաքուր լինի: Մոծակներ ու ճանձեր չմանելու համար
հարկավոր է, վոր բոլոր պատահանները պատած լինեն
մառլայով և մշան բաց:

Մասրներում յերեխաների առողջության ամբա-

պնդման համար պիտի ինկացի կերպով ողապարծել
բնության բոլոր հնարավորությունները՝ արեւը, ողը,
ջուրը: Անհրաժեշտ է, վորպեսզի մասրներն աղացուցեն
ծնողներին, թե թարմ ողից չպատք է վախենալ, վոր յե-
րեխան ծնված որից պատք է ողովի թարմ ողով. կրծքի
յերեխաներին ամեն որ պատք է վարժեցնել թարմ ու
մաքուր ողի. դուքս տանել սկզբում կարճ, ապա վար-
ժեցնել կամաց-կամաց յերկարացնելով ժամանակը:

Մասրները բոլոր յերեխաները պատք է առանան
կերակուր. վատ յեղանակներին կարելի չե յերեխանե-
րին պահել սենյակներում բաց յուսամուտներով:

Մեծ հատակի յերեխաները պատք է առնվանաբար
ամբաղնդվեն արեւի տակ. նրանք պատք է հաղնեն լայն
արուսիկներ և վարժվեն արեւակի ճառագայթներին,
սկզբնական չըջանում 5 բույս, ապա հետզհետե ավելաց-
նել ժամանակը, մինչև վոր յերեխաների մարմին սեւա-
նա արեւակից: Այնուհետե յերեխան որվա վորոշ ժամե-
րին կարող է անցկացնել արեւի տակ:

Խիստ արեւին յերեխաներն ունենալու յեն լայնկը
ծղուտե զլխարի. մեծահասակ յերեխաները կարող են
գետում յողանալ հատուկ հսկողության տակ: Լողանա-
լու տեղերում գետի ափերը պատք է հարմարեցվեն չո-
րերը հանելու և մաքուր պահելու համար: Ծծկեր և
փոքրահասակներին պատք է մասրում ամեն որ լողաց-
նել: Մասրը պատք է սովորեցնի յերեխաներին մաքրու-
թյան. ուտելուց առաջ յերեխաները պատք է ձեռները
վանան և սրբեն իրենց հատուկ սրբիչներով. նստեն սե-
ղանի շուրջը, յիրը պատրաստ և ճաշը. յուրաքանչյուր
յերեխան պատք է ունենա իր առանձին ամանը. նրանց
պատք է վարժեցնել արտաքինոցների, յերեխաների յե-

դունդները պետք է կարճ կտրված լինեն. քնիւրց առաջ
լվանալու յեն յերեսը, ձեռները և վոտները:

Յերեխան պետք է խմանա, վոր չի կարելի թքել
դեանին: Մսուրների աշխատակիցներ ուշի ուշով պետք
է հետեւին, վոր յերեխաների կողմից կիրառվին կյան-
քում բոլոր նորութիւնները. նրանք պետք է զգուշ և
սիրալիր վերաբերմունք ցուցաբերեն դեպի յերեխաները,
խիլ դրա համար աշխատակիցները պետք է ունենան հա-
տուկ պատրաստականութիւն:

Մսուրի վարկէր և ամբողջ պերսոնալը պետք է ծանոթ
լինեն վարակիչ հիվանդութիւնների հետ, վորպեսպի
այս կամ այն վարակիչ հիվանդութիւնների ժամանակ,
կարողանան կասկածելի յերեխաներին առանձնացնել
մինչև բժշկի դալը:

Պարզ և, վոր մսուրը պետք է սերտ կապ պահպանի
չրջանային բժշկի հետ և կատարել նրա խորհուրդները:

Կոլանտեսութիւնների ուժեղ աճման հետ, յերբ
դարգանում է գլուղի կոլեկտիվ կյանքը և նրա հետ
փոխվում են աշխատանքի ձևերը, յերբ որ որին մեծա-
նում է գլուղատեսակաւ թանկարժեք մշակույթների
տարածութիւնները և մեծ պահանջ ենք դրում աշխա-
տող ձեռքերի, բնական և, վոր մենք հատուկ ուշադրու-
թիւն ենք կենտրոնացնելու ամառային մսուրների վրա:

Ամառային մսուրների գոյութիւնը լավագույն մի-
ջոցն է, վորով լայն հնարավորութիւն է ստեղծվում
գլուղի սոց. սեկտորի համար դաշտային աշխատանքնե-
րի մեջ ներդրաւելու մեծ թիւով կանայք, վորոնց խոշոր
տոկոսը կտրված էր դաշտային աշխատանքներից և կառ-
չած էր մնացել տանը:

Ամառային մսուրն իր վրա յէ վերցնում յերեխանե-

րի խնամքի պարտականութիւնները և մորը հնարավո-
րութիւն և տալիս կատարելու նաև իր հասարակական
պարտականութիւնները՝ նպաստելով մեր յերկրի ար-
դյունաբերութեան:

Ամառային մսուրները նախապէս հարմարեցվում են
դաշտային բրիգադներին թվին: Վորոշվում են, թե քա-
նի կին և աշխատում բրիգադում և նրանցից քանիսն ու-
նեն ծծկեր, մանուկներ, համաձայն վորի, կազմվում է
մահճակայանի թիւը, սպասարկվող պերսոնալի քանա-
կը, սնունդը և այլն:

Մշտական և չարժական մսուրները սերտ կապ են
պահելու շրջանային բժշկի հետ, յիթե սովխողը կամ
կոլխոզը չունի իր հատուկ բժիշկը կամ բուժ. պերսո-
նալը:

Յերեխային մսուրն ընդունվելուց առաջ, նախապէս
պետք է բժշկական քննութեան յենթարկել. հիվանդ
յերեխաները մսուր ընդունվել չեն կարող: Այսպիսով
մսուրը պետք է ազատի մորը յերեխաների հագսից,
վորպիսպի դեղջկուհին հնարավորութիւն ունենա հան-
դիստ սրտով իր վրդայատեսական աշխատանքները
կատարել և աշխատել մասնաճիւղի մեր սոցիալիստա-
կան շինարարութեան:

Գլուղի աշխատավորութեանը մսուրներով ապահո-
վելու հարցը ներկայումս մեզ համար դառնում է ավելի
քան ակադեմիկ: Մսուրը բացի մորն ապատելուց ընտանե-
կան կյանքից, յերեխային սովորեցնելու յէ կոլեկտիվ
կյանքի:

Յեթի մենք կարողանանք մսուրներն որինակելի
բարձրութեան վրա դնել, այն ժամանակ, յուրաքան-
չուր աշխատավոր կցանկանա իր յերեխային մսուր
տալ, քան թէ թողնել իր անչափահաս յեղբորը, քրոջ

կամ թե իր ծեր տատի հսկողութեան տակ, վորանք իրենք կարիք ունեն սերիչի խնամքին:

Ինչ դեպքեր չեն լինում, յերբ մայրերը մտորենք իրացման հենց առաջին օրը բերում են իրենց յերեխաները հանձնելու, սակայն տեղ չլինելու պատճառով, մերժում են ստանում: Այնպես վոր գյուղի սոց. սեկտորի աշխատավորութեան, առաջին հերթին, մենք ապահովելու յենք մտաբերում. այդ անթիվ ճիշտ հաշվառում է կատարվելու, վորին ողնելու յեն շրջանի գյուղխորհուրդներն ու կուսկազմակերպութեանները:

Մտաբերը յայնորեն սան-լուս աշխատանքներ են տանելու. ծնողներին ծանոթացնելու յեն մտաբերում տարվող աշխատանքներին, կարգադրելու յեն դաստիարակութեաններ վարակիչ հիվանդութեանների մասին, սանդորֆիլակիկ խնդիրների շուրջը, վնասակար միկրոբների տարածման յեղանակիք և նրանց դեմ ձևաբանական յեղանակիչ միջոցների մասին, վորպեսզի մատուցվելիք օրգանիզմը պաշտպանենք շրջապատի վատթար պայմանների ազդեցութեաններից:

Անհրաժեշտ է աշխատավոր դեղձկուհուն ծանոթացնել սան. հիգիենիկ խնդիրներին հետ, վորպեսզի առողջապահական նորութեանները մտցնի, թե իր ընտանիքի և թե չքնադատի մեջ: Նա պետք է ըմբռնի, վոր բնական կարանք, հատկապես մանկան սննդակը, ուր յերեխանանց և կացնում իր կյանքի մեծ մասը, պետք է լինի յուստիւր և ոգտաւտ:

Անհրաժեշտ է, վոր յերեխայի սննդակի բոլոր անկյունները ներս թափանցեն արեւի ճառագայթները:

Ճարտարապետների նշանակութեանը մեծ է միկրոբների վրէժնալու գործում: Մայրը պիտի հասկանա, վոր

անհրաժեշտ է յերեխան գուրա բերել գրտանքի մաքուր սղում:

Տրտից վախենալու կարիք չկա. հարկավոր է միայն յերեխային ձմեռը հազցնել տաք, խիլ ամառը՝ թեթեւ:

Յերեխաներին թույլ չպիտի տալ մշտական չվման մեջ լինել անային կենդանիներին հետ: Հաճախ են դեպքերը, յերբ մի ամանից կերակրվում են յերեխան, կատուն և շունը: Այդ արվում է անհուն սիրուց յեղի կենդանիները: Կենդանիներին հարկավոր է սիրել և խնամքով վերաբերվել, լավ կերակրել, բայց վրէժնալ յերեխաների առողջութեան: Մայրերը պիտի յերեքը չմոռանան, վոր յերեխաները գյուրութեամբ կարող են վարակիլ կենդանիներից: Այդ վարակցութեան պակասութեանը պիտի վերադրել, վոր շրջաններ ունենք, ուր գյուղացիները 100%-ով վարակված են ճիճուներով, վորի վրսավոր աղբյուրը անային կենդանիների հետ չվիւն է:

Յերեխաների մահճակալները պետք է ստանձնադրած լինեն. նրանք չպետք է քնեն մոր հետ միասեղ. բացի այն, վոր մայրը կարող է վարակել յերեխային, այլև քնած տեղն անդուշութեամբ ծիծ տալիս՝ խեղդամահ անել նրան: Յեթե հատուկ մահճակալը բացակայում է ղյուղացու տանը, կարող է փոխարենը դործածել դամբուղ, վորով հարուստ է յուրաքանչյուր գյուղացին:

Չպետք է յերեխային որորելուն սովորեցնել. դա վրնասակար է, յերեխան անկողնում պետք է իրեն ազատ դրա, չպետք է շատ ծածկել, վաթաթել կամ թե որորողիս դամել, անշարժացնել. ընդհակառակը նա պետք է հնարավորութեան ունենա իր ազատ շարժումներով դարդանալու:

Հարկավոր ե խտրել հետեւել յերեխայի մարմնի մաքրութեան: Մարմնի կաշին պետք է մաքուր լինի, վորպեսպի իրեն ֆունկցիաները կարողանա կատարել: Յերեխային մինչև 6 ամսեկան հասակը հարկավոր է ամեն ուր լողացնել, իսկ 6 ամսից հետո, սըր մեջ. յերեխային լողացնելու ժամանակ այնպես պետք է պահել, վոր աշանջը, բերանը և քիթը ջրով չլցվի: Լողացնելուց և չորացնելուց հետո յերեխայի վիզը, թեպետի տակը և վունների արանքը հարկավոր է տալիկ ցանել:

Հարկավոր ուշադրութեամբ պիտի դարձնել յերեխայի քիթի վրա. միշտ պիտի մարքել, վոր յերեխայի քիթի մեջ կոշտեր չառաջանան, վորոնք կխանգարեն նրա շնչառութեամբը, կգժվարացնեն ծծել մոր կաթը և հանդիստ քնել:

Մաքուր պիտի պահել նաև յերեխաների ականջները, յեղունդները: Պիտի զգուշանալ յերեխայի ականջները մաքրել լուցիւռ ծայրը փաթաթած բամբակով, կարելի չէ անզգուշութեամբ վնասել թմրկաթաղանթը: Պիտի հետեւել և կտրել յերեխայի յեղունդները. նրանց տակը կուտակվում է կեղտ. յերեխան սկսում է ծծել մատները, կարող է կեղտից վարակվել կամ մարսողութեան գործարանի խանգարում ստանալ: Պիտի ուշադրութեամբ վերաբերվել յերեխայի լացին, վորը կարող է առաջանալ կամ հիվանդութեանից, կամ անմաքրութեանից կամ թե քաղցից. յետեւ յերեխան կուշտ է և տակն էլ թաց չէ, ապա ուրեմն պիտի մտածել հիվանդութեան մասին: Հաճախ յերեխաները լացում են ծաւալից, մանաւանդ ամառվա ամիսներին. այլ դեպքում կարելի չէ մի քանի թեյի զգալ յեռացրած սառը ջուր տալ կամ հաճախ նեղվում է փորկապութեանից.

վերջին պարագային՝ լավ է պարզ ու զով ջրից կլիգմանել և յերեխան հհանդատանա:

Գեղջկուհիներին պիտի սովորեցնել այս տարրական խնամքի ձեւերին, վորոնք գործնականում խոշոր նշանակութեամբ ունեն:

Յերեխայի, իր ծննդի հենց առաջին օրից, պետք է վարժեցնել վորոշ բեթիմի. յետեւ կանոնավոր կերպով այդ բեթիմը չորահպանվի, այն ժամանակ յերեխան իրեն ճշով կտախի կատարել իր բոլոր կապրիզները:

Փոքրիկ, սակայն կարելի է հարցերից մեկն էլ յերեխաների խաղալիքների հարցն է: Յերեխաների համար խաղալիքներ ընտրելիս, պետք է նկատի ունենալ, վոր ներկված չլինեն թոււնավոր ներկերով, վորովհետեւ յերեխան հաճախ այդ խաղալիքը բերանն է մացնում, կարող է թունավորվել: խաղալիքները պիտի չուտ կուտորվող չլինեն, կուտված մանր կտորները կարող է բերանն առնել և խեղդվել. ամենագլխավորը պետք է զգուշանալ, վոր մետաղյա խաղալիքները, սուր կողերով ու ծայրով չլինեն: Յերեխաների ձեռքը հաճախ մկրատ, ասեղ, դանակ և ուրիշ սուր իրեր են ընկնում, վորոնք ծանր հետեւանքներ են ունենում անխույժ վերաբերմունքից: Նման անզգուշութեանից հաճախ յերեխաները զրկվում են տեսողութեանից ևստանում են զանազան վնասվածքներ: Մայրերը և առհասարակ նրանք, ովքեր կապված են փոքրահասակ յերեխաների հետ, պիտի խիստ զգուշ լինեն և խնամքով վերաբերվեն վոչ միայն յերեխաներին, այլև նրանց շրջապատին, վորպեսպի նման վնասվածքներ չստանան: Յերեխաները մեծ մասամբ գոհ են գնում տեղեւ ծնողների անշնորհ խնամքին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Սանիտարական լուսավորության խնդիրների շուրջը	3
2. Փոքրիկ կենդանիների մասին, վորոնք կոչ- վում են միկրոքներ-մանրեներ	15
3. Որգանիզմի ինֆնապաշտպանության խո- շոր դերը	23
4. Դեզինֆեկցիա (ախտահանություն)	35
5. Մայրության և մանկության պահպանու- թյունը, կոնաուտացիա	41
6. Ծծկեր յերեխայի կերակրումը	49
7. Ցերեխաների վարակիչ հիվանդությունները	62
8. Կարմրուկ	66
9. Կապույտ հազ	69
10. Խոզուկ	71
11. Ծաղիկ	72
12. Դիփտերիտ	74
13. Բախտ (անգլիական ախտ)	76
14. Սիֆիլիս	78
15. Մուրների կազմակերպումը	83



ՀՀ Ազգային գրադարան



NL0279339

526

ԳԻՆԸ 35 Կ.



Д-р А. И. МАЛХАЗЯН

БЕСЕДЫ ПО ЗДРАВООХРАНЕНИЮ

Издание НКЗ ССР Армении

1 ★ 9 ★ 3 ★ 2

61
U-16